

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 19 ՕԳՈՍՏՈՍ, 1932

ԹԻԻ 13-14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թելադրութիւն մը

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Աստուածբաղձութիւն

Ս. Գիրքը

Բառական Պատկերներ

Կրօնական Գասխարակութիւն

Հիմնապատեհութիւն Գաղափարը

Ինչո՞ւ Մանուկներ Սուս կը Խօսին

«Նահապետական» Եկեղեցիի Կազմութեան առթիւ

Իմաստալից Պատմութիւն մը

Գիտական Բրոնիկ

Մալարիայի Ճակատամարտը

Ապագան Կանխայայտեն

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Տ. Ճ. Խ.

(Ա. ՄԸՐԷՑ)

ԲՐՈՅ. Ա. Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Է. Ս. ՈՒԷՊ

ԲՐՈՅ. Զ. ՊԵՋՃԵԱՆ

ԹՐԳ. ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԹՐԳ. ՀԱՅԿ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՎԵՐ. Ե. ԿԵՕԳԿԵՕՋԵԱՆ

ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Բ. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

ԱՄՓՈՓԵՑ՝ Ե. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 դրուշ ստերի. Սուրբիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Տիկ. Ե. Սարգիսեան իր Ամերիկա ուղեւորութեան առթիւ Հալէպի էմամ-նուէլ Հայ Աւետ. եկեղեցիին դաշնակ մը առնելու համար նուէրներ քաղած է շարք մը անձերէն: Յարմար Դաշնակ մը գտնելու և գնելու մէջ ազնուաբար օգնած են Տիարք Տիգրան Արմաղանեան և Տիգրան Նաճարեան, իսկ առաջինը օրով յանձն առած է դաշնակը Սուրիա ղրկելու հօգը: Դաշնակը քր. pianola ալ կը պարունակէ ապահով հասած է Հալէպ:

Միսիս Բիթըր Փօլ	25	Տուար.
Տիար Եսայի Մուսսան	15	»
Տիկ. Արմինէ Իսքէնտէրեան	10	»
Միսիս Մարթին	5	»
Տիկ. Կէրթմէնեան	5	»
Տօգթ. Յ. Պարսաւմեան	5	»
Տիար Ժիրճի Պարսաւմեան	5	»
» Կարապետ Աբաշեան	5	»
» Գրիգոր Գարսեան	5	»
» Արամ Վ. Փոլատեան	5	»
Մասիս Աւետ. եկեղեցիի Զանիցը	5	»
Կիլիկեան Աւետ. եկեղեցիի		
երիտասարդութիւնը	3	»
Օր. Եսթեր Հայկազեան	2	»
Տիկ. Նուրիցա Գազանճեան	2	»
» Էլիզա	2	»
» Կրէյս Պարոնեան	2	»
» Մէյ Բէօշկէրեան	2	»
Տիար Նազար Նազարեան	2	»
Տիար Զարի Պարոնեան	2	»
Տիար Բիթըր Ինճէճիքեան	2	»
Տիար Արամ Գրաճեան	2	»
Տիկ. Եռամա Պչագճեան	1	»
» Եւնիգէ Ուզունեան	1	»
» Մէրում Ատառնարեան	1	»

» Մարիամ Թօփալեան	1	»
» Եւփիմէ Մարտիրոսեան	1	»
» Հայկանուշ Եագուպեան	1	»
» Արսլանեան	1	»
» Դարակէօզեան	1	»
» Ովսաննա Տէր Յովհաննէսեան	1	»
» Մերսետե Յարութիւնեան	1	»

Օր. Զուարթ Յովհաննէսեան	1	»
Տիար Սողոմոն Կիւլէսէրեան	1	»
Տիկ. Վիքթորիա Պէզճեան	1	»
Տիար Կարուճ Մուրատեան	1	»

Այս գումարէն երկու տուարը ծախք եղած է:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Բնիկ Կարնեցի (Էրզրում) Օրգ. Սիրանուշ Աւագ Սարկաւագեան, մօր անունը Եղիսաբեթ, հօրը՝ Կարապետ Կամ Հաճի Պէյի կը փնտռէ իր քոյրերը Վարդանուշ և Վարդիթեր Աւագ Սարկաւագեանները, որոնք քանի մը տարի առաջ Մուսուլ՝ իրենց մօրաքրոջ Տիկ. Զարուհի Փափուճեանի քով բնակած են. այժմ Ֆրանսա՝ Բարիզ ըլլալին կը կարծուի: Լուր ունեցողներէն կը խընդրուի իմացնել հետեւեալ հասցէին:

Miss Siranoush Avak Sargavakian, c/o Rev. Y. Guekguezian. American Press, Beyrouth, Liban.

ՍՏԱՅԱՆՔ

ԱՐԵԳ, անկախ շարաթաթերթի Ա. տարի, թիւ 1 ը. տարեկան բաժանորդագրութիւն՝ Ֆրանսա և գաղութներ 20 ֆր. արտասահման 35 ֆր.: Հասցէ՝ 17, Rue des Dominicaines Marseille.

ՆՈՐ ԹՕՄԱՐԶԱ, պաշտօնաթերթերի Թօմարգայի Միացեալ ընկերութեան, Բ. տարի թիւ 8. 169, P. O. Box, Racine, Wis. (U. S. A.)

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 19 ՕԳՈՍՏՈՍ, 1932

ԹԻԻ 13-14

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Յուշիօր առաջին շաբթուան մէջ, այս տարի, Ամերիկայի Հայ Աւետ. Միութիւնը իր երեսունմէկերորդ ժողովը ունեցած է Նիւ Եորքի Հայ Աւետ. եկեղեցիին մէջ: Այս ժողովը մեզ կը շահագործէ մասնաւորապէս իր օրակարգին նիւթերովը, որոնց մասին զուրկ ենք տակաւին պէտք եղած ծանօթութենէ: Օրակարգի եօթը նիւթերէն մասնաւոր իրենց բնութեամբը, կը պատկանին ընդհանուր Հայ աւետարանականութեան: Ասոնք են, — Միութեան Դերն աւ Հեղինակութիւնը, Միջմիութեանական Մարմին մը կազմութիւնը, Աւետարանական Եկեղեցիի դերն ու կոչումը: Առաջին երկուքը, որ գործնական վարչական հարցեր են, մեր եկեղեցական մեքենականութեան մէջ ղէպի կեդրոնացում միտում մը ցոյց կուտան: Ժողովին մէջ մշակուած ծրագիրները չունինք զանոնք գնահատել կարենալու համար, բայց կը շնորհաւորենք Ամերիկայի Միութիւնը առաջընթաց լուրջ օւսումնասիրութեան առարկայ ըրած ըլլալուն համար: Աւետարանական Եկեղեցիի զաւթանց ցրուածութիւնը, յաճախ չէզոքացումը, եկեղեցիներէ դուրս պաշտօնական մարմիններու «յարգելի հեղինակութենէ» մը զուրկ ըլլալու հանգամանքը յառաջ բերած ըլլալ կը թուին այդ միտումը:

Մեր յիշած օրակարգի նիւթերէն երրորդը, Աւետ. Եկեղեցիին դերն ու կոչումը, կը կարծենք թէ առաջին երկուքէն աւելի ծանրակշիռ է իր կարեւորութեամբը: Աւետ. Եկեղեցին մօտ մէկ դարու պատմութիւն մ'ունի, որ տա-

կաւին լուրջ ուսումնասիրութեան առարկայ չէ եղած: Անոր ծագումին պատճառները, անոր կատարած կրօնական, կրթական մշակութային, ընկերային գերը, անոր ազդեցութիւնը իր միջավայրին վրայ, և մասնաւոր շերտերէն անոր տալիք պատգամը, կարելի բոլոր միջոցներով պէտք է հրապարակել հաստատ և ուժգին կերպով: Ներկայ նոր տերունիքը՝ այս բաւարին գրեթէ անտեղեակ՝ անգին զոհողութեան արդիւնքը եղող իր աւետարանական ժողովը կորսնցնելու վտանգին մէջ կը թուի: Մէկ խօսքով ներկայ աւետարանական ժողովուրդը աւետարանական գիտակցութիւն պէտք է վերստանայ: Մեր էջերը կը բանանք հիւրընկալելու այս հարցին շուրջ բոլոր լուրջ և օգտակար գրութիւնները:

ԱՍՏՈՒԱԾԲԱՂՁՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է գլխաւոր բանը, մեծագոյն և ամէնէն փառաւոր բանը, զոր մարդ կրնայ տեսնել կամ գտնել երկրի վրայ: Աստուած ինքն է այդ:

Եւ ի՞նչ է այն գլխաւոր, լուսազօյն և ամենափառաւոր բանը զոր մարդ ամէն օր կարօտ է, և զոր ամէն օր կրնայ ընել: Այս փառաւոր Աստուածը փրկողն է, գիտնալ, սիրել և փառաբանել է: Այն փառքը որ կ'սկսի ինքզինքը Աստուծոյ համար ապրելու նուիրած մարդուն կեանքին և սիրտին մէջ գործել, Աստուծոյ պէս փառաւոր է:

Եղբայր, սորված ես թէ ի՞նչ է առաջին և մեծագոյն բանը զոր ամէն օր պէտք է ընես: Ոչ պակաս և ոչ աւելի մեծ քան այս Աստուածը փնտռել, զԱյն գտնել, Անոր երկրպագել, Անոր հա-

մար և Անոր փառքին համար Ապրիլ:
Գրիստոնեայի մը կեանքին մէջ դէպ յա-
ռաջ մեծ քայլ մը առնուած կ'ըլլայ
երբ նա ճշմարտապէս կը հասկնայ այս,
և ինքզինքը կուտայ ամէն օր Աստուծոյ հետ
հաղորդակցութիւնը իբր իր կեանքին գլխա-
ւոր նպատակը նկատելու:

Ժամանակ առաւ և հարցուր գիտնա-
լու թէ բարձրագոյն իմաստութիւնը և
ամէնէն աւելի քրիստոնեայի ապրելիք
բանը սա չէ՞, այսինքն Աստուած շիտակ
ճանչնալ, և զԱյն սիրել քոյր սիրտով:
Հաւատա՞ որ ասիկա ոչ միայն իրապէս
ճշմարտ է, այլ Աստուած ինքը մեծա-
պէս կը փափաքի որ դուն իրեն հետ
այսպէս ապրիս, և ինքը քեզ կ'արող պի-
տի ընէ այսպէս ընելու՝ քու աղօթքիդ
պատասխանելով:

Այսօր սկսէ և Աստուծոյ Գիրքէն

խօսք մ'ալ անոր խօսելու հոգիիդ լուռ-
թեանը մէջ:

«Ո՛վ Աստուած, դուն ես իմ Աստուածս,
ես առեռանց Բեզ կը փնտնեմ: Հոգիս կը
ծարաւի Բեզի, ու մարմինս Բեզի կը փա-
փայի չոր ու ցամաք տեղը:»

«Բոլոր սիրտով Բեզ կը փնտնեմ:»

Խոր ակնածանքով և մանկական
բաղձանքով կրկնէ այս խօսքերը, մին-
չև օր անոնց ոգին և ոյժը քու սիրտդ
մտնէ. և Աստուծոյ սպասէ մինչեւ օր
դուն սկսիս ըմբռնելու թէ Անոր հետ
այսպէս տեսակցիլ ինչ օրհնութիւն է:
Քանի կը յարատեւես պիտի օտարիս ա-
կնկալել թէ Աստուծոյ վախը և ներկա-
յութիւնը բոլոր օրը քեզի հետ կրնայ
ըլլալ:

«Սպասելով սպասեցի Տէրոջ, ու Ան ծոռե-
ցաւ ինծի և լսեց իմ աղաղակս:» (ՄԸԲԵԾ)

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Ո՛վ արդեօք ուսոյց մեզ թէ մի պատճառ՝
Մեծ եւ առաջին, գերագոյն, անճառ,
Քան զարարչութիւն էր, եւ է սրւած
Ներդաշնակ օրհնէք տեղեւոյց:

— ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Ո՛ր խաչ ուղեցոյց կրնայ անխափան
Մեզ առաջնորդել այն մեծ Զօրութեան՝
Զոր պաշտէլ կոյէ մեզ Գիտակցութիւն,
եւ զայն որոնել յաւերժ իշաւիւն,

— ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Երբ գործողութիւն մեր յաջողիկ լաւ
եւ մշտափրփիք յուսոյ ծիլք անբաւ
Լքնուն մեր իղձերն, ո՛վ ցոյց տայ արդեօք
Ո՛ր վայրն երջանիկ անթարշաւ ծաղկոյ,

— ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Երբ կրթից հետ բուռն փորձութիւն մեր
Զանաւ յաղթել մեր զօրութեան հեշտիւ

Ո՞վ արդեօք ցոյց տալ մեզ ճանապարհն այն
Որով օգնութիւնն մեր գտնենք միայն,

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Երբ կրժող հոգեր ու մաշող ցաւեր
Մեր սիրտն ու հոգին հոցեն կարեւր,
Ո՞վ լինի նեցուկ մեր բեկեալ սրտին.
Կայծ տալ մեր նկուն հոգւոյն վերսին,

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Երբ խալս անօրեայ, սեւ վիշտ աշեսանց
Բաղխելով ուժգին՝ խորհակեն մեր շանց,
Ո՞վ ցրուէ կենաց աղէտն այն բոլոր,
Պարգեւէ հաճոյք մեզ սուրբ եւ անդորր,

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Պէս պէս արհաւիրք երբ պատեն մեր շուրջ,
Սոսկումն ահրեկէց, մըռայլ աղջամուղջ ...
Ո՞հ . . . ի՞նչ մեր մտաց մէջ փայլի՜ խկոյն,
Եւ սփոփէ մեզ՝ իբրեւ զուարթուն

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Երբ սարակուսանք իմաստակութեան
Եւ ալիք գաղտնեաց ծովուն անսահման
Խռովեն մեր դատումն ու մեր խորհուրներ
Ո՞վ մեր միտքն ուղղէ ճշմարտին ի վեր.

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Ու երբ սպառող մեր շունչը վերջին
Յայտնէ թէ հոգիք շուտ պիտի թռչին
Այս վանդակէն, դուրս, ո՞վ պիտի լինի
Մեզ մըխիթարիչ այնքան սիրելի՜

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

Մանուկ, յափահաս, ծերուկ, այր թէ կին
Թող լինի մեզ միշտ ընկեր անմեկին,
Ուղեցոյց ընտիր, սուրբ միանգամայն
Ճրվերջ մեր կենաց, ՄԻԱՅՆ ու ՄԻԱՅՆ

—ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ:

ԲԱՌԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Մանուկներու կրօնական դաստիարակութեամբ հետաքրքրողներուն:

Մեր առաջին պատկերն է Միսուրի Նահանգին մէջ, ագարակ մը, ասկէ 60 տարիներ առաջ: Տունը երեք սենեակնոց չէնք մըն է՝ կառուցուած տախտակներէ՝ որարեւի տաքութենէն ծռած եւ ձեւէ ելած ըլլալով անոր ճեղքերուն մէջէն օձեր կը տեսնուին, տան շուրջը խտտը այնքան բարձր է որ մանուկներ արածող ձիերը գտնելու համար խոտի դէզին կռթնած սանդուխէ պէտք է մագլցին, ամէնէն մօտ դրացին կէս մղոն հեռու է: Կիրակի առաւօտէ, եւ այդ բոլոր շրջանէն մարդիկ հաւաքուած են այս տան մէջ եկեղեցիի մը կազմակերպութեան համար: Պաշտամունքը կը լրանայ, մարդիկ, կ'երթան մինչ ծեր հովիւ մի քանի վայրկեանի համար նսանդու սենեակին մէջ կը մնայընտանիքին ութնամեայ աղջկան հետ: Այսչափ՝ պատկեր մը շինելու համար: Պատկերը ինքը կը կազմեն ծեր հովիւն եւ պղտիկ աղջիկը, որուն դառնալով հովիւն կ'ըսէ շատ բնական կերպով. «Դուն Յիսուսը կը սիրեմ»: Բայց մի քանի վայրկեան ետքը փոքր աղջիկը տան մէկ անկիւնը կ'առանձնանայ եւ ծնրադիր կ'ըսէ. «Ես կ'ուզեմ քեզ սիրել, Տէր Յիսուս, օգնէ՛ ինծի»: Այս իր սիրտին մէջ տարօրինակ ուրախութիւն եւ խաղաղութիւն կ'ըզայ, զոր 60 տարիներ անցնելէ վերջ իսկ չի մոռնար:

Երկրորդ պատկեր մը գծենք. դարձեալ ագարակի մը մէջ տուն մը: Չորս մանուկներ իրենց ծնողներով նախաճաշի սեղանի մը շուրջ բախում են: Բալորը կ'աճապարեն, հայրը՝ իր ագարակի գործին սկսելու համար, մանուկները գպրոց երթալու համար, քանզի պէտք է ձիով կէս ժամ ճամբորդեն:

Բուն իսկ պատկերը սա է. — հայրը եւ մանուկները կը ճաշեն, մինչ մայրը

իր պնակին քով միշտ պատրաստ է խոշոր տաւերով Աւետարանէ մը մանուկներուն կը սորվեցնէ մեր Տէրոջ վերջին խօսքը սկսելով Յովհ. Ժ. գլուխէն, եւ միշտ կրկնելով չարթուան միջոցին նախկին սորվեցուցած համարները:

Մայրը՝ բոլորը երթալէն ետքը կ'ուտէ. բայց նախ այս հագեւոր օնուկը պէտք է տրուի մանուկներուն: Այդ մայրը 30 տարիներէ իվեր երկինքն է բայց այս պատկերը մանուկներու յիշողութենէն երբէք չպիտի անհետանայ:

Երրորդ պատկերի տեղը միւս երկուքէն շատ հեռու, Լիբանանեան լեռներու մէջ պղտիկ գիւղ մը կը գտնուի: Աղքատ կոշկակար մը առաւօտէն մինչեւ գիշեր կը գործէ, եւ գիւղացիներուն համար կոշտ հողաթափներ եւ կոշիկներ շինելով իր ընտանիքը կ'ապրեցնէ: Օրուան աշխատանքէն եւ հապճեպ ընթրիքէ մը ետքը ինքը եւ ընկերակիցները իրիկուան ժամը հոգիները փնտռելու, կամ լքեալ մէկու մը մխիթարութիւն տալու կը յատկացնէ:

Կէսօրէ եւ ընտանիքը իր տկար ճաշը հազիւ լմնցուցած է: Պատկերը ինքը սա է. հայրը բոլոր դրացիներու մանուկները կը հաւաքէ, նորէն իր գործին երթալէ առաջ երգի եւ աղօթքի կարճ ժամանակ մը կը գտնէ: Դուն չեմ կրնար լսել Տէրոջ սա խօսքը, «Թոյլ տուէք այդ մանուկները, մի՛ արգիլէք զանոնք ինծի գալէն»:

Չորրորդ պատկերն ալ Սուրիոյ մէջ է: Շատ գործ ունեցող տան մը մէջ նախաճաշի պահն է: Բոլոր գլուխները կը ծռին երբ ընտանիքին ամէն մէկ անդամը կարգով աղօթքին կը մասնակցի. նախ հայրը, ապա մայրը եւ զաւակները եւ ներկայ գտնուող հիւրերէն ամէն մէկը կ'աղօթէ: Ամէն աղօթք պարզ է, միայն սրտաբախ մի քանի

քառերէ կը բաղկանայ, բոլորը գրեթէ 10 վայրկեան կ'առնէ:

Բայց ո՞վ կրնայ չափել մանուկներու վրայ ասոր ազդեցութիւնը: Ծնողներ կրնան վստահ ըլլալ որ Տէրը նոյն իսկ հիմայ իր ձեռքը ասոնց գլուխներուն վրայ կը դնէ օրհնելով և ըսելով, թոյլ տուէք մանուկները որ/ինծի գան:

Անա ասոնք են պատկերները.— ծեր ալեհեր հովիւր օր պզտիկ աղջիկին կ'ըսէ, Յիսուսը կը սիրե՞ս, մայրը օր իր մանուկներուն Ս. Գիրքի համարներ կը

սորվեցնէ մինչ անոնք կ'աճապարեն իրենց նախաճաշը ընելու, գիւղի կոշկակարը սր տախտակամածին վրայ նստած գրացիներու մանուկներուն հետ կ'աղօթէ, և պզտիկ մանուկները օրոնք նախաճաշի սեղանին շուրջը կ'աղօթեն:

Մեր եկեղեցիներուն մէջ աւելի զօրաւոր կեանքի մը դադտնիքը թերեւս պիտի գտնուի մեր ընտանիքներուն կրօնական կեանքը աւելի պարզ, աւելի կենսական, աւելի բնական ընելու մէջ:

Է. Ս. ՈՒԷՊ

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մի քանի շաբաթ առաջ Գէորգի Վազգէն Հայաթերթին մէջ երեցող յօդուածէն առնուած կտոր մը՝ մի քանի անշան փոփոխութիւններով:

Կրօնական դաստիարակութեան խնդիրը, ինչպէ՞ս տարիներէ ի վեր, այսօր ալ քրիստոնեայ ազգերու մէջ ամենակարեւոր խնդիրներէն մէկն է: Գաղափարներու տարբերութիւնը այս հարցին շուրջ մեծ է: Հին եկեղեցիները համեմատաբար քիչ կարեւորութիւն տուած են այս դաստիարակութեան, և զայն սահմանափակած են զօւտ վարդապետական, յարանուանական և ծիսական խնդիրներու մէջ: Մինչդեռ բողոքական եկեղեցիներ, առջի օրէն Սուրբ Գրոց ուսուցման և կրօնական կրթութեան ամենամեծ տեղ տուած են: Այս տարբեր գրութիւններու ազդեցութիւնը ի՞նչ եղած է տարբեր ազգերու նկարագրին վրայ, ալեհերեւ է պատմութիւնը լայնամտօրէն ուսանող մէկու մը համար: Բայց մենք հիմա չը պիտի զբաղինք այս հարցով:

Գալով մեր մէջ, մանաւանդ Մայր եկեղեցւոյ մէջ, կրօնական դաստիարակութեան խնդրոյն, կարծեմ այս մասին

ընդհանուր առմամբ նրեք տեսակէտներ կան: Ոմանք զայն անհրաժեշտ կը նկատեն կրօնաբարոյական և ազգային տեսակէտով: Կարծեմ հասարակ հայ ժողովուրդին բաւական մեծ հատուած մը, այս գաղափարէն են: Ասոնք կ'ուզեն օր իրենց գաւալները բարեպաշտ, մայրենի եկեղեցին սիրող ազգասէր հայեր ըլլան: Միայն թէ այս դաստիարակութիւնը, երբ, ո՞ր ուր՞ և ձեռքով, ինչպէ՞ս պէտք է տրուի, այս մասին որոշ գաղափար մը չունին: Ասով շատ չեն հետաքրքրուիր: Կարծես անտարբեր են:

Երկրորդ դասակարգ մը կայ որ կրօնական կրթութեան ամենեւին պէտք չեն տեսներ, զայն աւելորդ, մինչեւ անգամ ֆլաւակար կը նկատեն: Դրաբացական ծրագրին մէջ անոր տեղ չեն տար: Կրօնքը, քրիստոնէութիւնը, անոնց համար տեսակ մը աւելորդապաշտութիւն մ'է: Ասոր ժամանակը այլեւս անցած է կ'ըսեն: Դասագրքերու մէջէն իսկ կրօնասիրութիւնը և Աստուածապաշտութիւնը շոշափող կը տորները կ'ուզեն վերցնել և հրահման վերցուցած են: Այսպէս խորհողներ,

եթէ ոչ խոստովանողներ, տարբեր հոսանքներու հետեւող երիտասարդներու մէջ, և մեր ուսուցչական դասակարգին մէջ, և անոնցմէ դուրս, բաւական թիւով կը գտնուին:

Կայ երրորդ դասակարգ մ'ալ մեր մէջ, որ կը հաւատայ կրօնական դաստիարակութեան, և կ'ուզէ զայն քաջալերել աւելի ազգային և քաղաքական նկատմամբով, քան թէ կրօնական: Անոնք կը խորհին թէ հայ եկեղեցին և կրօնքը՝ ինչպէս անցեալի մէջ հայութեան զօրավիգը և պաշտպանը եղած են, նոյնպէս ալ հիմա, հայ լեզուի, հայ գրականութեան և հայ պատմութեան հետ, պէտք է ըլլան մեր ազգային աւանդութեանց և գոյութեան արթուն պահպանը: Այսպէս կը խորհին մեր մէջ շատ մը մտաւորականներ, և ուսեալ գործի մարդիկ և բարձրաստիճան կղերականներէ ալ կարեւոր հատուած մը: Ասոնց համար մեր դպրոցներուն մէջ կրօնական դաստիարակութեան աւագ նպատակներ տրամադրուին և քաղաքական և եկեղեցին ալ կրօնքն ալ պէտք է ամէն բանէ առաջ ազգային նուիրական ըղձանքներուն ծառային: Ասոնք միջոցներ են ընդհանուր հայ ժողովուրդին մէջ ազգային գգացումը վառ պահելու, զայն խրախուսելու: Իբր միջոց, ոմանք կը խորհին, ընկերային յիշաւորմամբ հաւանաբար անոնց կարեւորութիւնը օր մը պիտի նուազի կամ անհետանայ: Այն ատեն եկեղեցին և կրօնքն ալ իրենց արժէքը կը կորսնցնեն եւ մեր ազգային իտէալներու իրականացման ուրիշ միջոցներու կը դիմենք:

Եթէ չենք սխալիր մեր բարեկամը «Դիտող» ալ (Ազգականի մէջ այս նիւթին վրայ գրողը) կը պատկանի այս երրորդ դասակարգին: Կրօնական դաստիարակութիւնը կ'երեւի թէ զինք կը հետաքրքրէ չոկ ազգային տեսակետէ,

կրօնա-քառոյական տեսակետը իրեն համար հսկան չէ:—Մենք դժբախտաբար այս կէտին շուրջ իրեն բոլորովին համակարծիք չենք: Մենք ալ կը հաւատանք որ եկեղեցին և անոր հետ կրօնական դաստիարակութիւնը, այսօր ունին և ապագային ալ կրնան ունենալ կարեւոր բաժին մը մեր ազգային գաղափարներու իրազօրծման մէջ: Բայց աւելին ըլլալով, կը կարծենք թէ կրօնքը ազգային ծառայութենէ անդին, անկէ առաջ և անկէ վեր առանձին ինքնայատուկ արժէք մը ունի, ամենաբարձր արժէք մը, որ «Դիտողին» կողմանէ անտեսուած է, կամ պէտք եղածին պէս չենտեսած չէ:

Կրօնք ըսելով հօս կը հասկնանք զուտ քրիստոնէութիւն, ամենալայն նըշանակութեամբ, ազատ ունէ յարանուանական եկեղեցական նշանակութենէ: Այս Քրիստոնէութիւնն է որ մեզի կ'ընծայէ ամենաբարձր գաղափարականներ, իրոյ, ճշմարտութեան, արդարութեան, քաջութեան, անշահախնդրութեան, ծառայութեան, որ կը պարգեւէ մեզի ամենաբաւաւոր բանալին կեանքի խորհրդաւոր առեղծուածը լուծելու: Աւետարանի մէջ ներկայացուած մաքուր բարոյականութիւնը և Յիսուսի վեհ պատգամն է որ, արտադրած են ամենաբարձր նկարագիրներ զոր աշխարհ տեսած է:—Բարոյականութիւն մը որ չունի իր հասել իբր յենակէտ հաւատք մը, Աստուած մը, ինչպէս կրնայ կանգուն և հաստատուն մնալ, հարց մըն է որուն առջեւ արդի գիտութիւնը և փիլիսոփայութիւնը ինքզինքը անկարող կ'զգայ պատասխանելու:

Շատ անգամ կը լսենք թէ մեր ազգային ամենամեծ աւանդութիւնը քաղաքական և նկարական ըլլալէ աւելի քառոյական է, նկարագրի տկարութիւն է: Կը կարծենք թէ ասիկա շատ իրաւացի

է։ Այսօր մեր ազգային և անհատական գոյութեան ամէնէն աւելի սպառնացող ախտերն են, սուտը, կեղծիքը, նիւթապաշտութիւնը, շահամոլութիւնը, անմիաբանութիւնը, անբարոյակախութիւնը, անհաւատութիւնը, մէկ խօսքով ինկած նկարագիրը։ Ինչպէս պիտի դարմանուի այս հիւանդութիւնը, Հարցընել աւելի դիւրին է քան թէ պատասխանել։ պատասխանել աւելի

դիւրին է քան թէ գործադրել։ Ըստ մեր խոնարհ կարծեաց, մեր այս հիւանդութեան ամենաազդեցիկ դարմաններէն մին, հաւանաբար առաջինը, մեր զաւակներուն պզտիկ հասակէն սկսեալ, ընտանեաց մէջ, պարոյցի մէջ և եկեղեցիի միջոցաւ ամենայնարմար միջոցներով բարձր քրիստոնէական կրթութիւն տալն է։

Պէտքը,

Զ. ԳԵՋՃԵԱՆ

ՀԻՄՆԱՊԱՀՏԻ ՄԸ ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒՂԱՍՓԱՌՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հետեւեալը վեր. Տր. Ս. Ի. Մագարտոյի, երիցական ծանօթ քարոզիչին, արդիականութեան դէմ տուած մէկ քարոզին ամփոփումն է։

Ենթ. Թրգմէ.

Ցաւալի իրողութիւն մ'է որ մենք քրիստոնեաներս՝ փոխանակ աշխարհի և մեղքի դէմ մարտնչելու իրարու հետ կը կռուինք։ Մանաւանդ ողորայի է տեսնել թէ քրիստոնէական սկզբունքներու ուխտեալ ծառաները Բրիտանի հանդէպ անհաւատարիմ ըլլալով և Ս. Գիրքի չհաւատալով հանդերձ եկեղեցիներու մէջ իրենց պաշտօնը կը շարունակեն։ Բայց Բրիտանիանութեան հիմնականին մէջ կատարելապէս անհամաձայն ըլլալով միեւնոյն յարանուանական գործին տակ միատեղ քալել և գործել անկարելի է։

Աւետարանական ֆրիսոնեռքեան իմաստը։ Աւետ. քրիստոնեաներ Աւետարանի համեմատ եղող քրիստոնեաներ են, որոնց հաւատքը հիմնուած է Աւետարանի մեծ դէպքերուն և վարդապետութեանց վրայ, ինչպէս որ գրուած են Նոր կտակարանի մէջ։ Աւետ. Բրիտանեաներ գաղափարի փոքր տարբերութիւններ ունին Աստուծոյ վճիռին,

Մկրտութեան կերպին, երկրորդ գալուստի եւայլնի նման խնդիրներու մէջ։ Սակայն մեծ իրականութիւններու մէջ համաձայն են երիցականք, Մկրտականք, Մեթոականք, Լուտերականք, Ժողովականք, Եպիսկոպոսականք, եւայլն։

Ինչո՞ւ կը հակառակիմք արդիականներու։ Նախ ժխտական կերպով պատասխանենք։

Մենք արդիականութեան հակառակ չենք անոր համար որ գիտութեան հակառակ ենք։ Մենք արդիականներու չափ գիտութեան տեղեակ և անոր սիրահարն ենք։ Բայց գիտութեան հանդէպ մեր և արդիականներու գիրքը նոյնը չէ։ Աւետարանականք (հիմնապաշտ) գտնազանելու կ'աշխատին ըստուգուած իրողութիւնները, կարծիքները և վարկածները։ Տեսութեան (theory) մը համար Ս. Գիրքի մէկ մասը դուրս չեն ձգեր։ Բայց ասկէ աւելի ըլլալով եթէ մարդուս համար միայն դէպքերու շարքը կայ, վա՛յ մեզի։ Ինչպէս Պողոս ըսաւ, «աշխարհ իմաստութեամբը չճանչցաւ զԱստուծոյ», ո՛չ ալ բարեշրջման կարծիքներով։

Դարձեալ՝ մենք արդիականներու հակառակ ենք ոչ թէ անոր համար Ս. Գիրքի գիտական խազարկութեան հակառակ ենք: Արդիականներ կը յօխորտան թէ իրենք միայն խազարկու գիտուններ են: Աւետարանականք (հիմնապաշտ) գիտունները չեն արգիլեր Ս. Գիրքը խազարկել: Ընդհակառակը զանոնք կը հրաւիրեն ազատ ուսումնաթիւթեան, վստահ ըլլալով թէ գիտունը որչափ խորը երթայ Ս. Գիրքի խազարկութեան մէջ, այնքան աւելի փաստեր կը գտնէ անոր Աստուածային ծագման համար:

Բայց մենք արդիականութեան կը հակառակինք հետեւեալ պատճառներով:

1. Կը հակառակինք քանզի Ս. Գիրքը կը նախասեն: Բոլոր եկեղեցիներ Ս. Գիրքի հիմին վրայ կը կեդրոնանան: Քրիստոսի մասին եղող դէպքերը այս Ս. Գիրքի մէջ են: «Անոնք են որ ինծի համար կը վկայեն» ըսաւ Քրիստոս: Հետեւաբար ինչ որ այս վկայութիւնը կ'անարգէ, կը յանդգնի վարկարեկ ընել քրիստոնէութիւնը: Իսկ արդիականները Ս. Գիրքի մէջէն դուրս կ'ընեն գերբնականը եւ հրաշքները, զոր կը նկատեն դէպքի ժամանակակից դարուն մէկ խորհուրդը, կամ գրողին ճարտիկ մէկ հնարքը:

2. Կը հակառակինք արդիականներու քանզի փոքրցուած Աստուած մը կը պաշտեն: Երբ գերբնականը Ս. Գիրքէն դուրս հանուի կը մնայ Աստուած մը որուն ըրած բաները մարդն ալ կրնայ ընել: Այս կերպով Ս. Գիրքը կ'ըլլայ միայն մարդկային գործ, և Աստուած այնքան կը պղտիկցուի որ զԱյն Մովսէսն ալ Եղիան կամ Եսային երբեք պիտի չճանչնային իբր Աստուած: Բոլոր պէրթ Հորթոն, Անգլիացի ծանօթ քաղաքացի, կ'ըսէ. «Ազատական բողոքականներ իրենց Ս. Գիրքը կործնող»

ցին, և զայն կործնեցելով իրենց կրօնը կործնեցին»:

3. Մենք արդիականութեան կը հակառակինք քանզի Տէր Յիսուս Քրիստոսը կը պահպանէ:

Նախ զԱյն անկարեւոր կ'ընէ իբր պատմական անձ, գերբնական տարրը Նոր Կտակարանէն դուրս հանելով: Քրիստոսի կեանքը իր ծնունդէն մինչեւ համբարձումը գերբնական դէպքերու շարք մըն է, զոր կ'ուրանան ազատականներէն և արդիականներէն շատեր: Ուր կը մնայ ուրեմն Յիսուսի փրկչի ըլլալու հանգամանքը, եւր կը մնայ քառութիւն, նոր կեանք:

Տր. Ս. Ս. Քրէփօրի իսկ, որ իր ազատական գաղափարներուն համար Եպիսկոպոսական եկեղեցիին պաշտօնէն հրաժարիլ տրուեցաւ, է՛ն ազատական նըկատուած երկու անձանց գիրքերուն վրայ կը գրէ. «Այժմ զարմանալին այն է թէ այս քրիստոնէական խորհուրդի առաջնորդները անգիտակցաբար մեր կրօնքը բնորոշող ամէն բաները անարժէք կը նկատեն,— Աստուծոյ կողմէ տիեզերքի ստեղծագործումը, մարդուն մասնաւոր ստեղծագործումը իբր կատարել էակ, մարդուն անկումը, աստուածային ներշնչումը, Ս. Գիրքի անսխալականութիւնը, Աստուծոյ մարմնացումը Նազովրեցիի մէջ . . . Յիսուսի քաջարար մահը և այլն: Առանց ասոնց քրիստոնէական եկեղեցի չի կրնար ընել: Տր. Քրէփօր կ'ըսէ. «Արդիականները քրիստոնէութեան ընոյթը եղծանած են, անոնց կրօնքը կարող չէ մարդո փրկելու փրատութենէ, ինչպէս որ Սենեկայի և Մարկոս Աւրելիոսի բարոյագիտութիւնը կարող չէր Բ. դարու Հռովմէական

4. Կը հակառակինք արդիականութեան քանզի հետեւ աշխարհը փրկելու համար քան մը չի կրնար ընել: Տր. Քրէփօր կ'ըսէ. «Արդիականները քրիստոնէութեան ընոյթը եղծանած են, անոնց կրօնքը կարող չէ մարդո փրկելու փրատութենէ, ինչպէս որ Սենեկայի և Մարկոս Աւրելիոսի բարոյագիտութիւնը կարող չէր Բ. դարու Հռովմէական

ԻՆՉՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՍՈՒՑ ԿԸ ԽՕՍԻՆ

Յաճախ մեր մանուկները տուտ խօսելու ունակութենէն գերծ պահելու համար անոնց բարոյական կարճ պատմութիւններ կը պատմենք: Հիմակուան հոգեբանները շատ արժէք չեն տար այդ մեթոտին, պարզապէս խթանելը քարոզելը և սուտ չխօսելու ստիպելը օգուտ մը չունին մանկան:

Կան այն տեսակ յոռետես անասնոցնէր և ծնողներ որոնք կը հաւատան թէ պարկեշտութիւնը չի կրնար սորվեցալիս, այլ ամէն մանուկ պարկեշտ կամ անպարկեշտ կը ծնի:

Սակայն հոգեբաններու հետազոտութիւնները կը ցուցնեն թէ մանկան տուտներուն պատասխանատու եղողը բնութիւնը չէ, այլ ստախօսութիւնը մանուկին միջավայրէն կախում ունի:

Կայսրութիւնը քայքայումէ գերծ պահելու: Արդիականութիւնը իր Ս. Գիրքի, մեղքի և Քրիստոսի հանդէպ բռնած դիրքովը մեղաւորը ապաշխարութեան չի կրնար հրաւիրել. ան՝ ո՛չ աւետիս և ո՛չ զօրութիւն ունի»:

Արդիականութեան ազդեցութիւնը:

Արդիականութեան ազդեցութիւնը դատելու չէ ներկայ տերունոցով այլ յաջորդով: Ներկայ արդիական քրիստոնեաներ արդիականութեան արդիւնքը չեն, անոնք աւետարանական ընտանիքներու մէջ ծնած ու աղօթքով նուիրազործուած են, ազդափառ վարդապետութիւն քարոզող եկեղեցիներու մէջ մկրտուած և հոն անդամ եղած են: Եթէ իրենք առանձին ձգուին բան մը չեն կրնար ընել մարդկութեան համար: Յուսահատութեան և մահուան տեսնանք չեն կրնար յոյս, վստահութիւններ չեն և խաղաղութիւն ապա:

Թարգ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

Ամերիկայի հոգեբանները անխոնջ հետազոտութիւններ կատարած են տուտներու վերաբերեալ և գտած են թէ մանուկ մը բոլոր պարագայի մը տակ տուտ կը խօսի, սակայն ուրիշ պարագայի մը տակ ճշմարտութիւնը կը խօսի: Մանուկը իր այսինչ դաստիարակը կը խաբէ սակայն միւսին քով պարկեշտ կը գտնուի:

Այս գիտունները կը յայտնեն թէ մանուկ մը երբեք ստախօս չի ծնիր: Եթէ ոեւէ մանուկ մը սուտ խօսի նա կը գտնուի այնպիսի պարագայի մը տակ ուր լոկ սուտ մը գիտնէ կը փրկէ, կամ իր խաբէութեան համար կը վարձատրուի, կամ խեղճ տակաւին ճշմարտութեան և սուտի տարբերութիւնը սորված չէ և կամ, որ շատ հաւանական է, իր մեծերը՝ որոնք վրայ ինք կը հիանայ և որոնք զայն կը խրատեն տուտ չխօսելու՝ իրենք կը կատարեն նոյն խաբէութիւնը կամ սուտը:

Եթէ տղադ տուտ մը խօսի, մի՛ մոտաւորեալիք անոր նկարագրին վրայ, այլ զննէ՝ և գտիր այն պարագան որ տղադ տուտ խօսելու մղեց և աշխատէ՝ թէ ինչպէս կրնաս այդ պարագան փոխել:

Աշխարհի վրայ երեք տեսակ տուտեր գոյութիւն ունին. ճերմակ տուտեր, հասարակ տուտեր և վիճակագրութիւններ: Տր. Գրաւթ, Ամերիկացի հոգեբան մը գտաւ նաեւ երեք տեսակ տուտեր. ասոնցմէ միայն մէկ տեսակն է որ կըրնանք կանխամտածեալ տուտ նկատել:

Մանուկները ընդհանրապէս դէպքերը սխալ կը մեկնաբանեն, և այս թիւրիմացութեան արդիւնքն է որ իրենք սուտ կը խօսին կամ կը կործեն որ անոնք կը տեսնեն: Ասիկա առաջին տեսակ տուտերու շարքին մէջ կ'ըլլայ:

նայ: Մեծերուն համար շատ դժուար է ըմբռնել թէ օրքան սահմանափակ է մանկան մը փորձառութիւնը: Եթէ երկու տարեկան մանուկ մը քեզի ըսէ թէ՝ իր մեծ եղբայրը իր գնդակը կերաւ, քեզի պիտի թուի թէ ինք կը օտէ և կամ իր մեծ եղբայրը փորձանքի մէջ ձգել կ'ուզէ: Բայց այսպէս խորհելու չես, որովհետեւ կրնայ իր մեծ եղբոր խնձոր մը օւտելը տեսնել և կարծել որ իր գնդակը կ'ուտէ, որովհետեւ գնդակըն ալ խնձորին պէս կ'ուրէ:

Մանուկներ յաճախ չեն հասկնար շատ մը բառերու նշանակութիւնը: այս ալ զիրենք անուղղակի դէպի ստախոսութիւն կը մղէ: Մանուկներ զըծուարութեան կը մատնուին արտայայտուելու համար՝ ոչ միայն իրենց շատ տկար բառական պաշարին պատճառաւ այլ նաեւ շատ մը բառերու նշանակութեանց մասին անօրոշ գաղափար ունենալնու համար:

Քերականութիւնը ուրիշ դժուարութիւն մը յառաջ կը բերէ: Մանուկը բայի ժամանակէն գրեթէ բան մը չի հասկնար: Հետեւաբար իրմէ մեծերը թիւրիմացութեան պատճառաւ փոքրիկը կը պատժեն զայն ստախոս անուանելով, մինչդեռ մանուկը չիտակը խօսելու կը միտէր:

Անգլիոյ մէջ Տր. Բրաթ անուն հագեւան մը նախակրթարան մը այցելեց Եւր փօքր մանուկները «Հայր Մեր»ը կը սորվէին: Անոնցմէ պահանջեցին աղօթքը գրել: Մէկը փոխանակ հալոոս (hallowed) գրելու «հարուտ պի թհայ նէյմ» գրեց, այսինքն քու անունդ Հարուտ թող ըլլայ: Ուրիշ մը գրեց Lead us not into Thames station փոխանակ temptation գրելու, այսինքն զմեզ թէյմը կայարանը մի՛ տանիր:

Երկրորդ կարգի սուտերը յառաջ կուգան երբ մանուկը երեւակայական

բան մը իրականութեան հետ կը խառնէ: Մանուկը կը վերյիշէ և կը պատմէ իր երազները իբր իրական դէպքեր: Ատիկա ստախոսութիւն չէ, մանուկը իր ըսածներուն անկեղծօրէն կը հաւատայ ան պարզապէս ճշմարիտ դէպքերուն վրայ իր իղձերը և կամ երազները կ'աւելցնէ:

Երեք տարեկան աղջնակ մը իր ծննդքին կը պատմէ թէ օր մը առաջ իր հօրը հետ պտըտած ժամանակ շուն մը իր հօրը վրայ կը յարձակի, բայց ինք շան կը զարնէ գաւազանով և իր հօրը կ'ազատէ: Իրապէս փոքր աղջիկը և իր հայրը պտըտած էին և շան մը հանդիպած, սակայն պատմութեան մնացեալ մասը աղջնակը հիւսած էր, որովհետեւ ինքը երեւակայած կամ տենջացած էր հերոսական դեր մը կատարել արկածի մը մէջ:

Օր մը վերջ մանկան իղձը և իրականութիւնը իրեն համար մէկ իրական դէպք կը դառնան և իբր իրական դէպք կը վերյիշուին: Ուստի ծնողքները պէտք է իրենց մանուկներուն սորվեցնեն իղձի, երեւակայութեան և իրողութեան տարբերութիւնը: Այս առիթով շփոթութիւններ մանկան մտքին մէջ անբարոյական չեն, ասոնք լոկ իր անհասունութիւնը և տգիտութիւնը ցոյց կուտան:

Մանուկներու երրորդ կարգի սուտը՝ ճշմարտութեան տեղ գիտակից կերպով յայտնուած անճշմարտութիւններ են: Ասոնք ահա խաբէութիւն կը կոչուին:

Հետեւաբար ինչո՞ւ մանուկները գիտակից խաբէութեան կը փորձուին: Առաջին պատճառը վախն է: Եթէ մանուկը գուշակէ թէ փօքր սուտ մը գինք պիտի ազատէ իր ծնողքին բարկութիւնէն զայն կը գործադրէ և մօտալուտ փոթորիկէն զերծ կը մնայ: Արդ երբ մանուկը ճշմարտախօսութեան համար պատժուի և ստախոսութեան համար

վարձատրուի անշուշտ նա պիտի սկսի այսուհետեւ պաշաւոր սուտեր խօսելու:

Մանուկը ունէ հակառակութեան յաղթելու համար և կամ առանց դժուարութեան նպատակի մը հասնելու համար սուտ խօսիլ: Այս ալ խաբէութեան մէկ ուրիշ պատճառն է:

Ստախօսութեան մէկ ուրիշ պատճառն ալ արժանապատուութեան խնդիրն է: Թէ փաքեր և թէ մեծեր իրենց արժանապատուութիւնը չբժաւորելու համար գիտակից սուտ կը խօսին: Մանուկը իր պարագաներէն և կամ ծընողքներէն չծաղրուելու համար սուտ խօսելու փորձութեան մէջ կ'իյնայ: Հետեւեալ օրինակը այս կէտը լաւ կը լուսաւորէ: Աղջնակ մը խանութ կ'երթայ հաց գնելու, սակայն ճամբան կը մոռնայ թէ ինչո՞ւ համար ղրկեցին ղինք: Հետեւաբար նա կը նախընտրէ սուտ խօսիլ պատճառելով թէ խանութը ծախուած էր, քան ճշմարիտը խօսելու և ծաղր ըլլալու իր ծնողքին:

Մանուկներու սուտ խօսելու ունակութեան համար իրենց մեծերը պատասխանատու են: Ուստի ծնողներ կրնան այնպէս կրթել իրենց մանուկները որ անոնք երբեք չփորձուին սուտ խօսելու:

Ստորեւ կը դնենք մի քանի գործնական թելադրութիւններ ծնողաց և ուսուցիչներուն համար:

Նախ մանուկին պարկեշտ եւ ճշմարտախօս ըլլալ մի պարտադրեր և անոնց երկար քարոզներ մի տար: Մանուկները բարի վարքի և բարձր գաղափարականի պիտի տիրանան, բայց սորվեցնելու կերպը այս չէ:

Ամէն ջանք կատարելու է որ խաբէութեան համար պէտք չ'ստեղծուի, այդ փորձանքին չենթարկուի:

Բայց ամէնէն աւելի մանուկին առջեւ պարկեշտութեան լաւագոյն օրինակ մը տրուելու է: Այս շօշափելի օրի-

նակը իր ծնողքին կամ միջավայրին վարմունքը կրնայ ըլլալ:

Հետեւեալ հոգեբանական հարցումները կրնան ցոյց տալ թէ քու տղադ ինչ ուղղութեամբ կը մեծնայ:

1. Երբեք դուն սորվեցուցի՞ր տղուդ որ երթայ պատմէ այսինչ մէկուն թէ խոհանոցին մէջ պահուած մարդը տունը չէ:

2. Ձեր աղջիկը երբեք կը լսէ՞ թէ ի՞նչ մեծ քոյրը իր ընկերներէն մէկուն կ'ըսէ որ իր գլուխը կը ցաւի, բայց քիչ վերջ պատրաստուելով ուրիշի մը հետը պտոյտի կ'երթայ:

3. Մանուկը ձեր խնդալը լսած է երբ պատմուի թէ Սարգիս հանրակառքի վարիչը կրցաւ հնարքով մը խաբել և առանց տոմսակ առնելու հանրակառքով երթալ:

4. Կա՞յ մէկը որ մանուկին խոստումներ կ'ընէ բայց չի կատարեր:

5. Մէկը սաստիկ պատիժներու ըստ պառնալիքներ կ'ընէ՞ անոր, մինչդեռ այդ սպառնալիքները ընելու մտադիր չէ, զօր օրինակ աւանջը կամ քիթը կտրել կամ նոյն իսկ սպաննելու պէս սպառնալիքներ ընել:

6. Երբեք պատմեցի՞ր անոր թէ դեւերը կամ արջերը և կամ յաւերժահարսները պիտի գան քեզ ուտելու կամ տանելու:

7. Արդեօք մանուկը երբեք տեսած է մէկը որ առարկայ մը կը գործածէ եւ զայն իբր նոր խանութ ետ կը դարձնէ:

8. Կը յիշե՞ս ունէ պարագայ մը երբ անոր պատմեցի՞ր թէ այսինչ գեղը քաղցըր համ ունի և զայն ճաշակելով լեղի գտաւ:

9. Պատահեցա՞ւ այնպիսի պարագայ մը երբ ծնողքը իրեն խոստացան որ ղինք գիշեր ատեն միայնակ պիտի չթողուն, սակայն կէս գիշերին մանուկը արթննալով վախով տեսաւ որ չուրջը ունէ մէկը չկայ:

Եւ թէ ԶԵԶ ԿՈՒԶԵՄ ՇՆՈՐՀԱՒՈՐԵԼ ԶԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔԱՐՈՉԻՉԻՆ ՀԱՄԱՐ, Առաջին նայուածքով իսկ անօր մէջ տեսնուող պարզութիւնը, երիտասարդութիւնն ու եռանդը կրնան վերասպատեալ՝ անոնց սխալ գործածութեան համեմատական չափով, իսկ անոնք եկեղեցիի նպատակին անկասկած աւելի մեծ ծառայութիւն պիտի մատուցանեն եթէ լաւ գործածուին: Բարեպաշտ ընտանիքի մը պատկանիլը, հոգեւոր գործին նուիրումը, և առած կրթութիւնը յաւաստու երեւոյթներ են: Տարստնի մէջ ծնած և մեծցած ըլլալու պարագան ալ միգի կը թելադրէ որ իր մէջ փնտռենք Պողոսի մէջ տեսնուող ազնուութիւնն ու առաքինութիւնը: ԱՀաճեցի պէս երիտասարդ եկեղեցիի մը այսպիսի երիտասարդ քարոզիչ մը լաւ առաջնորդ է:

ԴԱՐՁԵԱԼ ՔԱՂԱՔԻՍ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԶԵԶ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՄ: Մինչեւ հիմայ անոնց մէջ Աստուծոյ շնորհքը և մարդու տկարութիւնը տեսնուած է: Դուք պատեհութիւնն ունիք զանոնք կամ զնահատելու կամ քննադատելու: ուէ մէկը եթէ ընել կ'ուզէք բաւական ատաղձ կրնաք գտնել: Ապագայի հետ յարաբերութիւնը նկատի առնելով արտօնութիւնն ունիք անոնց իբր տեսական մէկ ընկերակիցը գործելու: Իսկ լաւ բաներ կատարելու մէջ մրցումը օրինաւոր է:

Մանաւանդ ձեզ կը շնորհաւորեմ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, որուն անդամակցութեան ընդունուեցաք այսօր: Հալէպի մէջ իբր երրորդ, բայց Միութեան մէջ իբր 24 որդ եկեղեցին ըլլալով այս ընտանիքին մէջ ընդունուեցաք: Միտք բերենք որ Ս. Գրիգորի մէջ 3 և 24 թիւերը նշանակալից են: Երեք թիւի մասին խօսիլը պէտք չեմ տեսներ: Բայց Մովսէսի ժամանակ խաղաղութեան տառերու թիւը 24 էր (Թուոց

7. 88) Թովհանէս ալ տեսած էր 24 երէցներ որոնք երկնքի մէջ աթոռներու վրայ նստած ոսկի պսակներ կը կրէին, քնար կը զարնէին և երկրպագելով աղօթք կը մատուցանէին: (Յայտ. 4. 4, 5. 8, 11. 6, 19. 4): Այս եկեղեցիներն ալ խաղաղութեան զոհի կեանքը ապրելով վերջապէս աթոռի և պսակի արժանանալու կոչուած են: Արարախօս քոյր եկեղեցին, կարգ մը եղբայրութիւններ, հոգեւոր ընկերութիւններ կ'ընկերակցին այս ընտանիքին, հոգեւոր կեանքը և Ս. Գրիգորի ուսումնասիրութիւնը շեշտելով: Ահա այս ընկերակիցներուն համար շնորհաւորումի արժանի էք:

Քայլ մ'առելի յառաջանալով կըրնամ յիշել սիրելի ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՈՒՐԻՇ ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ, որոնք իրենց թանկագին պատմութեամբը, քրիստոնէական վարդապետութեան հանդէպ իրենց հաւատարմութեամբն ու աւանդապաշտութեամբը ուսումնասիրութեան համար շատ հետաքրքրական նիւթեր են:

Մէկ խօսքով, թեւէ անուան տակ գործող եկեղեցիներ և հոգեւոր կազմակերպութիւններ ձեզի համար կը կենան՝ անոնցմէ դաս առնելու և կամ զանոնք օրինակելու համար: Հետեւաբար շատ բնական է ձեզ շնորհաւորել անոնց համար:

Ըսածս ամփոփեմ: Ահա այսօր հաստատ կամքի տէր երիտասարդ եկեղեցի մը և երիտասարդ քարոզիչ մը գտանք, որոնք չըջապատուած են կարգ մը չափահաս եկեղեցիներով և հոգեւոր կազմակերպութիւններով: Արդեօք անոնք կը բաղձան Տէրոջ շուրջը կենալ և զԱյն վայելել: Եթէ այդպէս է, այս ինչ եկեղեցիկ փափաք և ինչ հաճելի տեսարան է: Այլակերպութեան լեռին վրայ երկինքէն իջած և երկրէն հօն մագլցած հաւատացեալներ Յիսուսի

շուրջը հաւաքուած Անտր փառքը կը վայելէին: Հաւատացեալի համար ապէս աւելի հետաքրքրական ի՞նչ կրնայ ըլլալ: Արդարեւ կ'արժէ որ հոն տաղաւար շինելով բնակութիւն հաստատուի:

Բայց ի՞նչ կը տեսնենք: Յիսուս ասոր միջ վտանգ մը տեսնելով այդ փառքը յանկարծ ամպի փոխեց, իբր թէ ելեկտրական կոճակի վրայ կ'օխելով լոյսը մարած ըլլար: Քանզի հաւատացեալներու կոչումը եթէ իրարու հետ, նայնիակ Յիսուսի հետ միասին գտնուելը վայելել ալ ըլլայ, Անոր մէջ հանգչիլ (տաղաւար կանգնել) չի կրնար ըլլալ: Որովհետեւ այս մարմինը այդ փառքին հետ համեմատական չէ: Այս պատճառաւ կը կարգանք որ անոնք քունով ծանրացած էին: (Ղուկ. 6. 32) Երկիրը յարմար վայր մը չէ երկնային երանութիւն վայելելու: Ասկէ պատվարը պարտականութիւնը անոնց կ'ըստպասէր: Ուրեմն իբր եկեղեցի ի՞նչ է մեր պարտականութիւնն ու կոչումը:

(Շարունակելի)

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԻՄԱՍՏԱԼԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Հիտեւեալ ուշագրաւ դէպքը տեղի է ունեցած Անգլիոյ մէջ: Զայն կը յանձնենք ընթերցողներուն, ոչ թէ լոկ կարդալու և խնդալու, այլ կարդալու և դասեր առնելու:

Սուր դիմագլծով ծերուկ մը ձերբակալուելով օտարականատուն առաջնորդուեցաւ:

Ոտարականապետը հարցուց.—

—Ի՞նչ է արհեստդ:

—Ոչինչ... Պարզ պտըտող մըն եմ:

—Անշուշտ թափառական մը...

—Սխալէն չատ հեռու չեմ, քանզի պտըտողներ և թափառականներ գրեթէ նոյն են, միայն սա տարբերութեամբ թէ՛ թափառականներ առանց դրամի, իսկ պտըտողներ առանց խելքի կ'ըլլան:

—Ո՞ր տեղերը պտըտեցար:

—Ամբողջ երկիրը:

—Ի՞նչ նպատակի համար:

—Քննութեան համար:

—Ի՞նչ եղաւ ձեր քննութեան արդիւնքը:

—Մի քիչ յանձնարարել, շատ քննադատել, աւելի շատ խնդալ, իսկ միշտ լալ...

—Ըսէ նայիմ, ի՞նչ է յանձնարարութիւնդ:

—Գեղեցիկ կիներ տունը մնալու է, պերճախօսը քիչ խօսելու է, լաւ գրողը կարճ գրելու է, իսկ տգէտը լեզուն զսպելու է:

—Ի՞նչ է քննադատութիւնդ:

—Կը քննադատեմ այն երիտասարդը՝ որ արտաքին բաներէն խաբուելով կ'ամուսնանայ, այն ասանողը՝ որ առանց ընդունակութեան դպրոցներ կը յաճախէ, և այն ժողովուրդը որ արբեցողներ կ'ընտրէ:

—Ի՞նչ բանի կը խնդաս:

—Կը խնդամ այն մարդուն որ իր դիրքին արժանի չէ, այն թագաւորին՝ որ թէև կը թագաւորէ բայց չի կրնար կառավարել, և այն կրօնականին որ թէև կը քարոզէ բայց իր քարոզին չի հաւատար:

—Ի՞նչ բանի կ'ուշադր:

—Կուշամ անիրաւուած որբեւայրիներուն, և բնաջնջման դատապարտուած ազգերուն: Ե՛հ, ե՛հ, ա՛խ ես կ'ուշամ անարդարութեան:

Այս խօսքերով մարդը անպարտ արձակուեցաւ:

Պէյրուք

ԵՆՈՎԳ ԿԷՕԲԿԷՕԶԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԵՐԿՈՒ Ֆրանսացի ճարտարագետներ նոր յաղթանակ մը տարին անթել հեռագրով հաղորդակցութեան մէջ, շնորհիւ իրենց հնարած 120 քիլովատ խողովակին, որ կրնայ 10,000 մէթր երկայնքով ակիքներ արձակել: Այս կերպով հաղորդակցութիւնը կարելի եղաւ օդանաւին, շոգենաւին և սուզանաւին հետ

ԱՆԳՆԻՈՅ մէջ փոխադրութեան նոր միջոց մը հնարուած է որ երկաթուղիի և օդանաւի խառնուրդ մըն է: Այս օդանաւը երկաթուղիի վերեւ երկաթած երկաթ զիծի մը վրայէն կը սուրայ: Միեւնոյն ատեն հաւասարակշռութիւնը պահելու համար պողպատէ գիծերէ կախուած է: Ամէն վայրկեան երկու մղոն ճամբայ կը կտրէ և ճամբորդներ, թղթատարական և վաճառականական ապրանքներ արագ տանելու համար կը ծառայէ:

ՄԻԱՑԵԱԼ Նահանգաց մէջ լուսանկարչական ապակիներ շինուեցան որոնք կրնան մութին մէջ պատկեր առնել: Անոնք պէտք է որ սառնոցի մէջ պահուին մինչև իրենց գործածուելու ատենը: Ասոնք ենթակարմիր կոչուող և աչքին անտեսանելի ճառագայթներուն հանպէպ շատ զգայուն են. որով քիմիական նիւթերու շատ մը յատկութիւններ ի յայտ կուգան՝ որոնք ցարդ անծանօթ էին միզի: Ասկէ զատ այս ապակիները հարկւր կամ հազար անգամ աւելի արագութիւն տանին քան անոնք որոնք ցարդ կը գործածուին: Ասաղաքաչիներ այս ապակիներուն միջոցաւ կրցան երկաթի հետքեր գտնել երկու աստեղաց հոյլերու մէջ: Կը կարծուի որ մեծ և կարեւոր գիւտեր կրնան կատարուիլ երբ անոնք հեռագիտակներու մէջ գործածուին: Այս ապակիները կրնան այնպիսի մարմիններու պատ-

կերներ առնել որոնք անտեսանելի են թէ՛ միւր աչքին և թէ՛ հիմակուան լուսանկարչական ապակիներու:

ԱՐԾԱԹԷ և պղինձէ ամաններու մէջ մնացած ջուրը մանրէառաջան յատկութիւններ ունի: Արծաթի քլորիդը և բրուտի կաւը խառնուելէ ետքը բարձր տաքութեամբ կ'եփուի: Այս խառնուրդին մէջէն անցնող, քամուող ջուրը աղետապի և ռարիշ ախտերու մանրէները կ'ապանէ:

ԿՕՇԿԱԿԱՐՆԵՐԸ, հնակարկատները ոտնաման շինելու ատեն բաւական անպէտ կաշիի կտորներ կ'առնեն ան: Միացեալ Նահանգաց մէջ այս անպէտ նրկատուած առարկաները հաւաքելով զանոնք մասնաւոր մեքենաներով ճընշումի կ'ենթարկեն և ապա կ'օտանան առաջուան պէս նուրբ կաշիի թերթեր, որոնց դիմացկնութեան յատկութիւնները նոյն իսկ առաջինին կը գերազանցեն:

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ և բաւական իրերու արձակած լոյսը կրնայ մորդուս աչքին տեսանելի ըլլալ երբ անդրմանիչակային ճառագայթներուն ենթարկուին:

ՓՈՐՁԻ մը ժամանակ ապակիէ կուծ մը շագանակի ծոռի կեղեւէն արտագրուած հեղուկով մը լեցուեցաւ և երբ անդրմանիչակային ճառագայթներուն ենթարկուեցաւ լուսանկար մը առնելու չափ բաւական լոյսով փայլեցաւ: Ուրիշ իրեր ալ միեւնոյն գոհացուցիչ արդիւնքը տուած են:

ԱՌԱՆՑ ռապիտակի տեսակ մը խառնուրդոյց հնարուած է որ 64 անգամ մեծցընելու կարողութիւն ունի: Այս խառնուրդոյցը կը բաղկանայ գլանէ մը, որուն մէկ ծայրը աւելի լայն է: Մէկ ծայրը խորշանիւթային առարկայ մը կայ և միւս ծայրը աչքի համար փոքր ծակ մը: Խառնուրդոյցը գործածելու համար, փոքր առարկայ մը կը գրուի թափանցիկ սկաւտեղի մը վրայ որը փակելու համար կը թրջուի և զայն

խառաքարտի ծակէն կը դիտեն: Գոհացուցիչ արդիւնք յառաջ բերելու համար քննուող առարկան թափանցիկ ըլլալու է:

Բ. ՃԱՌԳԱՅԹՈՎ ա՛լ աւելի լաւ և յստակ կ'առնուին մարդկային մարմնի պատկերներ, երբ մարմնոյն զանազան մասերը ձայնի ալիքներու հոսանքի մը ենթարկուին, որոնք բարձրախօսէ մը կ'արտադրուին: Այս կերպով առնուած լուսանկարները աւելի յստակ են քան անոնք որոնք ձայնի ալիքներուն ենթարկուած չեն:

ՏԱՆԻՔՆԵՐՈՒ վրայ գիտական փորձերու համար հաստատուած ազարակի մէջ ելեկտրականութեամբ բոյսեր մեծցնելու յաջող փորձեր եղած են: Հողին տակը զետեղուած թելերու միջոցաւ ելեկտրական տաքութիւն կը փոխանցուի բոյսի արմատներուն: Այս կերպով բոյսերը բնականէն աւելի շուտ կ'աճին: Ասկէ զատ սերմերը և հոռնտները ելեկտրական հոսանքներու կ'ենթարկուին ցանուելէ և տնկուելէ առաջ: Ասոր արդիւնքը ըլլալով լուրկի, արեւածաղիկի, և այլ բոյսերու զանազան տեսակներ յառաջ եկած են: Ճիշտ հոս արեւու լոյսի տեղ արուեստական լոյս պիտի գործածուի: Ուստի զանազան գօտիներու մէջ ապրող բոյսերը կրնան իրարու քով աճիլ զանազան ելեկտրական վոլթի (ուժին) ենթարկելով:

ՍԵՐՄԵՐԸ հողին մէջ ցանուելէն առաջ, կարելի է կանխազուշակել բոյսերու մեծութիւնը և կամ բարձրութիւնը: Ատիկայ ելեկտրական գործիքով մը կը կատարուի, որ կը չափէ մեծ ճշտութեամբ մը սերմէն դուրս դրուած ելեկտրական ուժը: Գտնուած է որ սերմերուն այս թաղան զօրութիւնը սերտ յարաբերութիւն մը ունի իրենց աճելու յատկութեանց հետ:

ՇԱՔԱՐԵՆԷԳԻ անպէտ միացած մասը

ճնշումի ենթարկուելէն վերջ հազուստեղէնի յարմար մետաքսանման թել կ'արտադրուի: Մինչեւ հիմա անոնք իբր վառելիք և ելեկտրական ուժի անհաղորդիչ նիւթ կը գործածուէին: Այս նպատակին համար բորոկածին կը գործածուի:

ՇՆՈՐՀԻՒ ՆՈՐ մեքենայի մը զիւտին՝ կոյրերը կրնան դիւրութեամբ կարգաւ տեսէ գիրք կամ թերթ: Այս մեքենան զրքին մէջ տպագրուած էջերը կամ պատկերները կը փոխադրէ ալիւմինիւմէ շինուած թերթի մը վրայ, գիրերը ուղուցիկ վիճակի մէջ յառաջ բերելով, կոյրը կրնայ կարգաւ տեսէ զրութիւն երբ իր մատները այս գիրերուն վրայ դնէ: Մեքենան այնպէս մը շինուած է որ կրնայ արագ կամ կամայ գործել կոյրին փափաքածին համեմատ: Ասկէ զատ կարելի է նաեւ ալիւմինիւմ թերթին վրայ տպագրուած քիւրերը փոքրցնել կամ խաշորցնել:

ԻՐԱՐՄԷ բոլորովին անկախ աշխատելով երկու Գերմանացի հնարիչներ կրցան շինել երկու ահսակ թեւաւոր հեծելանիւններ, որոնք օդին մէջ կրնան թռչիլ: Մին պարզ հեծելանիւմըն է և թեւեր ունի իսկ միւսը թէ թեւեր և թէ՛ թափ տալու համար հոթիոններ (rockets) ունի: Առաջին փորձով 108 մղոն մէկ ժամուան մէջ կարելի եղաւ սնաւառնիլ:

ԳԵՐՄԱՆԻՈՅ մէջ ելեկտրականութեամբ ուղուած մեծութեամբ ձուկ կ'որսան առանց օրսացուած տեսակէն պղտկիներու միատեսակութեամբ: Ատիկա կը կայանայ ջուրին մէջէն փոփոխական ելեկտրական հոսանքներ անցնելով: Այս կերպով ձուկը կ'անզգայանայ բաւական ատեն մը և ջուրին մակերեսը կ'ելլէ: Հետաքրքրական է որ փոքր ձուկերը անզգայացնելու համար բարձր ուժով ելեկտրականութիւն պէտք է իսկ մեծերուն համար նուազագոյն:

ՍՊԱՆԻՍԹ մէջ, Պարսելոնիա նաւահանգիստին մէկ կողմէն միւսը օդային թրէններ 200—300 ասֆ բարձրէն կը տանին, իւրաքանչիւրը երեք հարիւր հօգի մէկ ժամուայ մէջ: Այս քաղաքին մեծ աշտարակները հաստ ելեքտրական թելերով իրարու կապուած ըլլալով թրէնները անօնցմէ կախուած են և առանց օնէէ արկածի կը ճամբորդեն:

ՀԱՍԿԵՏՆԵՐ Ս. Գիրքի վերաբերեալ որմանկարներ գտած են երբեք չգտնուած կը կատարէին Սուրբիայ Տուրա կոչուած վայրը, եկեղեցիի մը պատերուն վրայ: Ասանք երկրորդ դարու գործ կը նկատուին և կը պարունակեն Յիսուսին հիւանդ մը բժշկելը, Բարի Հովիւը, Յիսուսի ժովուն վրայ քալելը, Յիսուսի Յարութիւնը, Հին կտակարանէն Ազամի և Շւայի պատկերը, Դաւիթի և Գողթաթի մենամարտը: Այս նկարները նոր լոյս կը սփռեն քրիստոնէական պատմութեան ակիզը: Գոյութիւն ունեցող Նոր կտակարանի մասին:

Ներկայ գիտնականներու մեծամասն

նութիւնը կը հաւատայ թէ աշխարհօ երթալով կը տաքնայ, որով դարերու ընթացքին հիւս. և հար. բեւեռներու ստուը պիտի հալի և պիտի ողողէ աշխարհի ցած տեղերը: Տր. Հըմֆրի մեծ գիտունը կ'ըսէ թէ հիմակուան նիւեորքը Վենետիկի պէս փոքր կղզիներու խումբի պիտի փոխուի, ջուրերը պիտի օղողեն քաղաքը մինչեւ տաուներկրորդ յարկերը:

ԼիթիՆՍ անուն մետաղի հիւլէ մը երբ քիմիաբաններու կողմէ ումակոծուեցաւ 500 վոլթ ուժ ունեցող բրտաւորներով, հիւլէն բրտունի մը հետ միացաւ և ապա երկու ալֆա կոչուած մասնիկներու բաժնուեցաւ, որոնցմէ իւրաքանչիւրը 8 միլիոն վոլթի ուժ ազատ արձակեց:

Այս փորձը ինչպէս նաև նախկին կատարուած փորձերը երկու բան կը փաստեն. նախ՝ փոքր օյժէ մը շատ աւելի մեծ օյժ ստանալ կարելի է. երկրորդ՝ տարր մը ուրիշ տարրի մը փոխել կարելի է:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՄԱԼԱՐԻԱ Ի ԴԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ձմրան ցուրտ գիշեր մըն էր: Այգքան ցուրտ՝ որ սենեակիս դուռն ու պատուհանները լաւ մը ամրացնելէ յետոյ, երկու վերմակ և երեք թանձր վերարկուններու ներքեւ պահուելու հարկադրուած էի: Սակայն, հակառակ այս բոլոր նախազգուշութիւններուս, տակաւին ջերմութեան կարօտէն մարմինս սաստիկ կը զոզար:

Ատեն մը անկողնիս մէջ ասպէս տառապելէ յետոյ, տարօրինակ բան մը զգացի սրունքներուս վրայ: Կարծես

վարի անդամներս կը պլլուէին ու կը քաշուէին գաղտնի ուժի մը ազդեցութեան տակ: Շտապով թեւ երկնցուցի վերմակին ներքեւ որ աւելի ուշիւ քնեմ ինքզինքս: Աւա՜ղ թեւս արդէն անքան կարճցեր էր որ հազիւ մէջքս կը հասնէր: Վայրկենապէս ըմբռնեցի եղելութիւնը: Կը կծկուէի ջերմութեան նուազումին ուղիղ համեմատութեամբ: Անճառակ՝ վիճակիս գիտակից լուռ ապաստելի վճռիս: Մարմինս պզտիկցաւ: Անդամներս քաշուեցան, հինգ

վայրկեան յետոյ, ա'լ դադրած էի հա-
տարակ աչքի տեսանելի ըլլալէ :

Բարացած կը ջանայի սա յանկար-
ծական դէպքերը ամփոփել մտքիս մէջ,
երբ զգացի որ արդէն ակամայօղ կը
բարձրանամ փռչիի հատիկի մը նման :
Թաղէ մը հազիւ սաւառնած էի ննջաբա-
նիս բարձունքներուն մէջ, երբ հեռու-
էն մտեղ մը մօտեցաւ : Օդանաւի կը
նմանէր այլ անգամաւայ հազիւ տեսա-
նելի միջատը : Առիթէն օգտուելով
կոտորէն բռնեցի զինք և սկսանք մի-
ասին ճամբորդել : Երկար չտեսեց ճամ-
բորդութիւնս, յանկարծ մտեղը նետի մը
արագութեամբ խոյացաւ դար վար,
բզզաց, և յետին մասը վեր առնալով թա-
ռեցաւ, դիրք մը որ միայն մալարիաի
միջրոպը կրող մտեղներու յատուկ է :
Զկրցայ ինքզինքս պահել իր զարկար
կռնակին վրայ : Ոտքս սահեցաւ և
ինկայ գետին : Գետինը եղբօրս քիթն
էր :

Օդանաւ և ճամբորդ պահ մը լուռ և
անշարժ մնացինք մեր եղած տեղը :
Մտեղը սակայն առաջ խզեց լուռութիւնը :
Շարորինակ ձայն մը հանելով իր խայ-
թոցը մտցուց եղբօրս մորթին տակ և
սկսաւ անոր արիւնը ծծել :

Սայթօցին թափանցած տեղը խոշոր
փոս մը բացուած էր, որուն յատակը
տակաւին կը պարտանակէր տեսակ մը
հիւթ որ մտեղը խայթած պահուն բեր-
նէն ցայտեցուցած էր արեան սառիլը
արգիլելու համար : Իջայ փոսին մէջ,
և ինչ տեսնեմ, տասնեակ մը մալարի-
աի միջրոպներ, որ մտեղին ցայտեցու-
ցած հիւթին հետ իրենք ալ ցայտած,
անհոգ կը լողային բուն հիւթին մէջ :
Ասքան մօտէն դեռ չէի տեսած սա ա-
նառակները : Փալթոս հանեցի, իջայ
հիւթին մէջ և սկսայ զիբենք խեղդել
մէկ մէկ : Միջրոպ մը սակայն խորա-
սուզուեցաւ, և քովի պատուած երակին
մէջ մտնելով ակաւ արեան հոսանքին

հետ յառաջանալ : Հետեւեցայ իր ըն-
թացքին : Բայց այնպէս պատահեցաւ
որ հոսանքը մեզ զատեց : Զինք դիտե-
ցի հեռուէն արկը յարձակէր արեան կար-
միր գնդիկներէն մէկուն վրայ : Բաւա-
կան ճիգ թափելէ վերջ յաջողեցաւ թա-
փանցել գնդիկին մարմնոյն մէջ և միջ-
րոպ և ըջիջ աներեւութացան դար-
ձուածքի մը ետեւ :

Սկսայ ճամբորդել արեան մէջ :
Միրտ, թոք, ուղեղ, ստամոքս, տեղ
լծողութիւն չայցելած : Ինչ համար ա-
մենահետաքրքրական բանն էր դիտել
արիւնը : Դիտել զայն անպէս ինչպէս
որ ան էր : Անգոյն հեղուկ մը, քիչ
չատաղի և անհամ, որուն մէջ կը թա-
ւալին միլիոնաւոր կարմիր գնդիկներ՝
զերթ փոքրիկ հրեղէն սկաւառակներ,
որ աւելի կ'արծարծուէին ու կը փայ-
լէին երբ թթուածինով լեցուէին թոքէն
անցած պահերնուն : Մերթ ընդ Մերթ,
կարմիր գնդիկներու ամբողջին մէջ նաեւ
երեւան կուգային ճերմակներ, որ՝ անը-
ման կարմիր գնդիկներուն՝ կրնային ար-
եան մէջ լողալ, ի հարկէ կռուիլ թըշ-
նամիի դէմ և պաշտպանել մարմինը :

Մտքէս անհետացած էր մալարիաի
միջրոպը, երբ երկու երակներու միա-
ցած տեղ մը դէմ դիմաց եկանք իր հետ :
Շատ խոշորցած էր բարեկամս : Աչքե-
րուս չհաւատացի : Մէկի տեղ ութը
գլուխ ունէր հիմա : Այն կարմիր գնդի-
կը որ զինք կը պարտանակէր, առած
խիստ գունատ, ուժասպառ վիճակ մը
ունէր : Քովի գնդիկին կից մը տալով
նետուեցայ միջրոպին վրայ, որ զայն
մէկ հարուածով ճգմամ : Սակայն մէկ
մ'ալ նայիս հրէշին ութը գլուխները
անջատուելով դուրս պայթեցան գնդիկի
մէջէն և սկսան ոլոր մոլոր յառաջանալ :
Աչքերս փակեցի որ մահա չտեսնեմ :
Բայց միջրոպները փոխան ինչ մօտե-
նալու տարբեր կարմիր գնդիկներու մէջ
մտան :

Օրեր սահեցան: Իւրաքանչիւր միքրոպ իր տեսակէն հազարաւորներ արագորած էր սոյն միթոտով: Ամէն տեղ երեւելի էին կարմիր գնդիկներ բեռնաւորութեամբ ութ կամ տասն և վեց գլուխով հրէշ միքրոպներով: Պատեւրազմը անխուսափելի էր, ժամանակը հասած էր:

Միքրոպներն էին սր սկսան յարձակողականի, նրկվայրկեանի մը ընթացքին օղ բարձրացան միանգամայն այն միլիօնաւոր կարմիրները որ հրէշ միքրոպներ կը կրէին: Հրէշ միքրոպներու գլուխները անջատուեցան, իւրախանչիւր գլուխ ծնունդ տալով նոր անհատի մը, և դաշտը լեցուեցաւ թշնամի բանակով: Ճերմակ գնդիկներ արդէն պատրաստ էին լաւ պաշտպանողականի մը: Սկսաւ կատաղի ճակատամարտը: Հուր աւ կրակ կը տեղար չօրս գին, Ճերմակ գնդիկներ կը յարձակէին միքրոպներու վրայ և զանոնք չըջապատելով կուլ կուտային: Միքրոպը մարսողութեան կ'ենթարկուէր գնդիկին մէջ և վերջ կուտար իր կեանքին: Իսկ միքրոպներու առաջնակարգ գէնքն էր թունաւոր կազերու գործածութիւնը: Ճերմակ գնդիկներ միլիոններով կ'ոչընչանային թոյնի աս մթնշաղկաւ մէջ որ բնաւ չէր փնասեր միքրոպներուն:

Ինքս երակի մը կափարիչին հտեւ դիրքառած կը հարուածէի անցնող միքրոպները: Կռիւը կը սաստկանար վայրկեանէ վայրկեան: Դաշտը արդէն լի էր դիակներով: Կորուստը անուշի էր երկու կողմէն ալ: Բայց մէն մի կողմ կարծես յամառօրէն վճռած էր կամ օչնչանալ և կամ ոչնչացնել: Ճերմակ գնդիկներ ամէն վայրկեան նոր օյսեր կ'ստանային իրենց զանազան պահտներէն: Բայց հակառակ ասոր չէին կրնար թշնամիին յաղթել: Նա կ'ընդդիմանար ու կ'ընդդիմանար:

Իրիկուան դէմ էր: Ճերմակներ մեծ

կորուստ տուած էին: Յուսահատութիւնը ակսած էր մուտ գտնել իրենց մէջ: Թշնամին աւելի և աւելի յաղթական կը հանդիսանար: Նա սկսած էր իր դիրքը ամրացնել անպաշտպան կարմիր գնդիկներու մէջ: Յոյսս փարատած՝ անկիւն մը քաշուեցայ քիչ մը հանգստանալու համար, երբ քիթս, բերանս լեցուեցաւ լեղի համով մը: Նոյն ժամանակ մեծ փոփոխութիւն մը նշմարեցի պատերազմի ընթացքին մէջ: Կարծես շանթահարուած թշնամին փախուստ կուտար: Իսկ յոգնած ու ժառպառ ճերմակ գնդիկները նորէն օգնորուած ցոսկալի յարձակողական մը կը մղէին միքրոպներու դէմ: Դարձեալ նետուեցայ հալածողներուն մէջ: Զարդը սոսկալի էր: Կէս ժամուան ընթացքին թշնամին ջախջախուած՝ ապաստանելու վայր մը կը փնտռէր: Դաշտը արեան լճի մը վերածուած էր: Կիսամեծ միքրոպներու աղաղակները կը լսուէին մերթ ընթ մերթ ճերմակներու յաղթական կոչերուն մէջտեղ: Կանգ առած կը դիտէի, երբ դարձեալ զգացի լեղի համը օր կոկորդոս կ'այրէր: ... Նշոյլ մը իսկոյն ծագեցաւ մտքիս մէջ, գաղտնիքը պարզուած էր: Դիմիկն էր որ կը չըջէր արեան մէջ, և այս լեղի համը կուտար բերնիս: Ան էր պատերազմի ընթացքին փոխուելուն պատճառը: Ան էր գնդիկները քաջալերող և զանոնք վերջնական յաղթութեան առաջնորդողը:

Բ. Ա. ԶԷՊԷՃԵԱՆ

Ծնթ. Խմբ. Յօդուածագիրը Պէյրուսի Ամերիկեան համալսարանին բժշկական ճիւղի փայլուն աշակերտներէն է և ծանօթ բժիշկ Տորթ. Աւետիս Զէպէճեանի զաւակը:



ԱՊԱԳԱՆ ԿԱՆԽԱՅԱՅՏՆԵԼ

Ապագայի կանխատեսութիւնը կը նմանի վաղուան օդի գուշակութեան, որ յաճախ ի դերք կը հանէ բոլոր ակնկալութիւնները: Ապագայի մարգարէացումը որչափ աւելի մեզ գէպի օխալ կողմ կ'առաջնորդէ ընկերային, քաղաքական և տնտեսական հարցերու մէջ:

Մարգարէութիւնը կեանքի ամէն մարզերուն մէջ ծաւալ կը գտնէ, առկա տկար ոննդառութեան արդիւնքը եզոզ հիւանդութիւն մըն է, որ կռագայ մեզի տալու միայն անբաղդ օրեր և խաբկանքներ, ինչպէս որ արձանագրուած կը տեսնենք պատմութեան տըխուր էջերուն մէջ:

Ներկայ դարուս մտայնութիւնը լաւագոյն կերպով կարելի է արտայայտել Անգլիացի գիտնական և մեծ գրագէտ Ուէլսի օտ խօսքերով. «Բան մը ըլլալէն կամ պատահելէն առաջ գիտնալ գիտութեան բուն իօկ նպատակն է, և կազմակերպեալ աշխատանք պէտք է թափուի մարգարէացումը բանական հիմերու վրայ ղեկու և մարդկային հմտութիւնը ապագային հետազօտութեան մէջ գործածելու համար»: Սակայն այս կարելի եղած չէ վերջին 26 տարիներու միջոցին:

Ապագան գուշակողները երկու դասակարգի կը պատկանին. յռուտես և լաւատես: Լաւատեսները փայլուն յաղթանակներով լիցուն, շարունակ յառաջդիմող ապագայ կեանք մը կը մարգարէանան: Իօկ յռուտեսները ողբերգական ապագայի մը վալուտար կը նախաձայնեն: Այս երկու տեսակ գուշակութիւններն ալ չեն իրականացած: Ուիլմուտ Րիյո իր Martyrdom of Man գիրքին մէջ (1892) կը գրէր. «Հիւանդութիւնը գոյութենէ պիտի դադրի,

քայքայումի պատճառները պիտի անհետին, անմահութիւնը պիտի հնարաւի: Եւ ապա երկիրս պզտիկ գալով մարդիկ անհուն միջոցին մէջ պիտի գաղթեն և մոլորակէ մոլորակ պիտի ճամբորդեն ամենայն դիւրութեամբ: Երկիրը սուրբ վայր մը պիտի դառնայ, զոր տիեզերքի ամէն անկիւնէն այցելել պիտի գան: Վերջապէս մարդը բոլոր Ֆիզիզական ոյժերու վրայ պիտի իշխէ, նոր դրութիւններու ճարտարագետը պիտի ըլլայ, աշխարհներ պիտի ստեղծէ: Մարդը կատարեալ պիտի ըլլայ»:

Յռուտես գուշակները կը մարգարէանան իրենց վախէն դրդուած ըլլալով, իսկ լաւատեսները կը մարգարէանան իրենց պատահիլ փափաքած բաներուն մղումով: Պատմութիւնը ցոյց կուտայ թէ մեր մարգարէացած բաները չեն պատահած, գէպքերը միշտ մեր ակնկալած բաներէն տարբեր եղած են: Ապագան յամու կերպով մերժած է իրականացնել մեր այն մեծ մարգարէութիւնները որոնք մեր փափաքներէն ծնունդ առած են, զոր այնքան օյժով և խանդով ամէնուն հուշակած ենք. իսկ այն մարգարէութիւնները որոնք մեր մտքին երեւակայութիւնն էին, և պարզապէս առանց նպատակի յղացուած մտային ֆանթազիներ, և մեր մտքին խորը տեղ չեն գրաւած, և կամ երկրորդական մանրամասնութիւններն միայն, կամ նոյն իսկ 'անոնց չինք հաւատար, զարմանալի ճշտութեամբ իրականացած են:

Սուիֆթ, Անգլիացի երգիծաբանը, երբ իր «ճամբորդութիւն գէպի Լապուտա և Լապագո» գիրքը կը գրէր իբր անիմատ և անհաւատալի երեւակայութիւն Լապուտացի աստղագէտներու բերնով կը պնդէր թէ Հրատը երկու արբանեակներ

ունի, բան մը օր 300 տարի վերջը գիտութեան կողմէ հաստատուեցաւ:

Այս ճշմարտութիւնը աւելի աչքառու կերպով կը տեսնենք Ժիւլ Վէռնի վէպերուն մէջ, օր մեծ հռչակ հանած է իբր կանխատես մը: Թերեւս այն պատճառաւ միայն որ ապագայի վրայ շատ քիչ գրած է: Իր վէպերուն մէջ նկարագրած ճամբորդութեանց միջոցները անհաւատալի կերպով իրականացած են իրմէ քառօրդ կամ կէս դար վերջ: Բայց Ժիւլ Վէռն 1893 ին սախոստովանութիւնը կ'ընէր. «Կրնամ ըսել թէ վէպս (Օդապարիկի մէջ Հինգ Շարաթներ) գրած ատենս, ինչպէս նաեւ հիմա, երբեք չեմ հաւատացած թէ օդապարիկներ ղեկավարել կարելի է, բացի այն պարագային երբ բացարձակապէս կայուն մթնոլորտ մ'ունենանք: Ինչպէ՞ս կարելի է օդապարիկ մը շինել որ կարենայ մէկ երկվայրկեանի մէջ 6, 7 կամ 8 մէթր արշաւող հոսանքներու դէմ ճակատի: Ասիկայ պարզապէս երազ մըն է»:

Շատեր օրոնց համար կռահեցին թէ անմահներու պանթէոնին մէջ պիտի ապրին յաւէտ մոլոցուած են: Իսկ աւելի շնորհ որոնք կորսուելու դատապարտուած են՝ իբր անյայտ դէմքեր, անմահներու դասին մէջ անցած են այսօր, ձ. Քիյթս փափաքեցաւ որ իր տապանադրին վրայ սապէս գրուի: «Հոս կը ննջէ այն որուն անունը ջուրի վրայ գրուած է»:

Մարգարէները տնտեսական մարզին մէջ ալ յուսախաբսւթեան մատնած և մատնուած են: 1929 Դէկ. 31 ին աշխարհի մեծագոյն զրամատուններէն մէկուն նշանաւոր ելմական խորհրդատուն կ'ըսէր թէ «ներկայիս ընկճում մը անկարելի է»: Իսկ հիմա նոյնքան հաստատ կերպով կը յայտնեն թէ ներկայիս վերականգնում մը անկարելի է: Բայց այս յուսեան գուշակութիւնները աւել

լի երջանիկ օրի մը նշաններն են:

1871 ին երբ Ֆրանսան պարտուած և դրամական ծանր տուգանքին ենթարկուած էր, Ներսիսյան զայն սնանկութեան անգունդին եզրը նկատեց և գուշակեց թէ անոր վերականգնումը անկարելի է: Սակայն կարճ չըջանի մը համար միայն վեհաժողովներու մէջ իր նախապատուութիւնը կորսնցուց: 1903 ին մեծ աստղաբաշխ Նիւգոմ օգային ճամբորդութիւնը անկարելի նկատեց: Սակայն քանի մը շաբաթներ վերջ Բայթ եղբայրները սաւառնակով փորձ կատարեցին, և ցոյց տուին թէ գիտական մարզին մէջ տրամաբանութեան նախագուշակումը օրքան քիչ խալ առաջնորդ մ'է:

Ինչպէս որ կատարելապաշտութիւնը կ'ապականէ ընկերային փոփոխութեանց մարգարէութիւնը, նոյնպէս ալ յառաջդիմականութիւնը կը սողոսկի ապագայ միջավայրի բոլոր գուշակներու մտքին մէջ: Այն գաղափարը թէ ինչ որ տյսօր լաւ կ'ընենք վաղը աւելի լաւ կ'ընենք ժխտուած է ամէն մարզի մէջ մարդկային գործունէութեան պատմութեամբ: Եւ միւս կողմէն անխուսափելի նկատուած բանը երբեք չի պատահիր, օրովհետեւ անխուսափելիութեան գաղափարը սա ենթադրութեան վրայ հիմնուած է թէ մարդկային գործերու մէջ ինչ օր հիմա կը պատահի յաւիտեանս պիտի շարունակէ պատահի: Ի բաց առեալ անօթութեան, սէրէ, նախանձէ, յոյսէ և վախէ, մարդկային գործերու մէջ նոյն բաները նոյն ձևով երբեք չպիտի շարունակեն պատահի:

Ապագան կը գուշակենք այնպէս ինչպէս որ մենք կ'ուզէինք որ ան ըլլար: Բայց ապագան երբեք մեր փափաքներուն գոհացում չի տար: Ուրեմն եթէ ապագայի մասին կարծիք կը յայտնենք հաւանական դէպքերէն ընտրենք

անոնք որ շատ քիչ հաւանակութիւն ունին պատահելու, եւ հաւանական ընկերային պայմաններէն ընտրենք անոնք որ շատ քիչ հաճելի եւ փափաքելի են ժականակակից մարդուն:

Խօսքս ամփոփելով ըսեմ եր, արդի դուշակութեան օրովեցուցած լուսագոյն բանը սա է թէ ապագան ինքզինքը չի յայտներ եւ երկար միջոցի համար ծրարագրելը եսասիրութեան մեծագոյն եւ էն վտանգաւոր թոյլտութիւնն է: Ապագան երբեք մեր փափաքներուն չի հպատակիր: Ապագան դիտողներու մեծագոյն վտանգը սա չէ թէ անոնք մարդերը կ'առաջնորդեն ներկայ կարիքութիւնները մոռնալով երազային նըպատակներ հետապնդելու, այլ՝ երբեմն անոնք շիտակ կ'ըլլան իրենց գաղափարներուն մէջ որոնք վաղուան համար բարերար են, սակայն ճիշդ այդ բարիքին համար ջանալով զայն կ'արգիլեն իրականանալէ:

Ամփ. Ե. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ

ԸՆԹԵՐՅՈՂԻ ՍԻՒՆԱԿ

Տէ՛ր խմբագիր,

Կարդացի հետաքրքրութեամբ Ձանիցներու յատկացուած գոյգ թիւի մէջ ձեր խմբագրականը, եւ ուրախ եղայ որ անգամ մըն ալ Ձանիցը կը հրաւիրէք իր գործունէութիւնը նոյնացնելու իր նպատակին հետ: Սակայն կ'ուզեմ ուշադրութիւն հրաւիրել հետեւեալ կէտերուն վրայ:

Ինչպէս ձեր յօդուածէն հասկըցայ դուք բաւորովին կ'ուրանաք Ձանիցի ընկերային եւ մշակութային դերը: Թէպէտեւ Ձանիցը հոգեւոր կազմակերպութիւն մըն է եւ նպատակ ունի «օգնել Բրիտտոսի եւ եկեղեցւոյ համար» սակայն իր գործունէութեան եղանակին

մէջ եկեղեցական չէ: Նաեւ, Ձանիցի նպատակին մի կարեւոր մասն է «անդամներու մէջ բարեկամական զգացումը վառ պահել»: Նաեւ, ջանիցը երիտասարդներու յատուկ ընկերակցութիւն մըն է եւ ոչ թէ չափահասներու: Որով՝ որքան որ սխալ եւ այսպէս չէ Ձանիցի համար իր բուն հոգեւոր նպատակը ձգելով երկրորդականներու եւ կամ միջոցներու կարեւորութիւն տալ, նոյնքան սխալ է ունենալ ընկերակցութիւն մը՝ որ մերկացած է իր ընկերային եւ մշակութային ձեռնարկներէն: Մեր ժողովուրդը կամաց կամաց ընկերային բարձր մակարդակի մը հասնելու է եւ բարձր մշակոյթի մը համար նուրբ ճաշակներ պատրաստուելու են: Եւ այս մասին Ձանիցի դերը ուրանալ քաջալերելի գաղափար մըն է արդեօք: Եւ ինչպէս դուք ալ կ'ըսէք այս մշակութային եւ ընկերային ձեռնարկներու նպատակը ըլլալու չէ դրամական հասոյթ մը հայթայթել, այլ մեր ժողովուրդին մերձեցալի ընել տրամբերութեան թափանցանքներ, գիտական եւ բժշկական ճառեր եւ ընկերային եւ երաժշտական երեկոյթներ որոնք անգնահատելի օգուտներ տւին:

Նաեւ եկեղեցւոյ մէջ զուտ մշակութային մարմին մը յառաջ բերելու մասին ձեր գաղափարը ես անգործնական կը գտնեմ: Չէ՞ք խորհիր որ փոքր եկեղեցիներու մէջ, ուր Ձանիցները արդէն իրենց գոյութիւնը պահպանելու ետեւէն, զատ մշակութային մարմին մը գոյութիւնը Ձանիցի աւարացման, եւ Ձանիցի գոյութիւնը այս երկրորդին անկարելիութեան պատճառներն են: Փորձով տեսնուած է որ փոքր եկեղեցիներու մէջ երկու տարբեր ուղղութեամբ գործող ընկերակցութիւններու գոյութիւնը վտանգած է երկուքին գոյութեան եւ յաճախ պատճառ եղած է նախնիքի եւ երբեմն ալ մրցակցութեան:

Եթէ երբեք մշակութային պէտք մը կայ մեր եկեղեցւոյն մէջ, այդ պէտք է ընէ Զանիցը, իբր առանցնաշնորհում, իմաստուն կերպով միշտ յիշելով որ վայն պիտի ընէ «Քրիստոսի և եկեղեցւոյ համար»:

Մնամ յարգանք

Ե. Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Ծնթ. ԽՄԲ. — Ուրախ ենք որ սիրելի ընթերցողը մեզի պէս ինք ալ կ'ընդունի թէ 1) Զանիցը հոգեւոր կազմակերպութիւն մ'է քր պէտք է զիր գործունէութիւնը նոյնացնէ իր նպատակին հետ, թէ 2) մեր ժողովուրդը կամաց կամաց ընկերային բարձր մակարդակի մը հասնելու է և բարձր մշակոյթի... նուրբ ճաշակը պէտք է ունենայ, թէ 3) «այսպիսի ձեռնարկներու նպատակը դրամական հատոյթ մը հայթայթել չէ: Պէտք է դիտել տալ նաեւ թէ սիրելի ընթերցողը երկու կէտերու մէջ սխալ հասկըցած է մեր գրութիւնը: Նախ՝ մենք չենք ուրանար ինչպէս որ ինք կը գրէ, «Զանիցի ընկերային եւ մշակութային դերը», բայց կ'ուրանանք անոր այդպիսի նպատակ մ'ունենալը: Ընկերութիւնը կրնայ անհնալ իր թերթը, օրով, սակայն, նպատակ չունի գրականութիւն ընել: Զանիցի մշակութային և ընկերային գործունէութիւնը պէտք է այնչափով և այն ձեւով ըլլայ որչափ և ինչպէս որ իր նպատակին օգտակար է իբր միջոց: Երկրորդ՝ մենք չենք առաջարկած երիտասարդներու յառուկ երկրորդ ընկերութիւն մը կազմակերպել, զոր աւելորդ կը գտնենք, այլ մշակութային մարմին մը, որ կրնայ հինգ անդամէ բաղկացած ըլլալ, նպատակ ունենալով ժողովուրդին զուտ մշակութային պահանջները գոհացնելու:

Հարցում մը, թէ ի՞նչ պէտք է ընել Զանիցի շրջանակէն դուրս մնացող

առուար թիւով երիտասարդութիւնը, ուշադրութենէն վրիպած է սիրելի ընթերցողին:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՊԵՐՈՒԹԷՆ

Մայրերու տօնին առթիւ Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ Մայրերու Միութիւնը հանրային պարտէզին մէջ ճաշկերոյթ — ցերեկօյթ մը տուաւ եկեղեցիին տիկիններուն և օրիորդներուն. խնամքով պատրաստուած էր Այնթապցիներունը շանաւոր լահմանիքը:

Իսկ Վեր. Ե. Կէօքկէօզեան Մայրերու տօնին առթիւ պերճիմաստ քարոզ մ'ըրաւ եկեղեցւոյ բնմէն. պատմեց շատ գեղեցիկ դրուագներ մայրերու կեանքէն յուզուելով և յուզելով բոլոր ներկաները. և յորդորելէ յետոյ երիտասարդները որ հնազանդ ըլլան իրենց մայրերուն և չվշտացնեն վանձք, ձաղկեց ու խօսիւ քննադատեց նորօյթի հետեւող մայրերն ու մայրցոնները:

Ռմսոյս 19ին, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ սըրահին մէջ տեղի ունեցաւ քաղաքին Զանից Ընկերակցութեան չորս քոյր մասնաճիւղերու տարեկերջի հանդէսը, եղան նուագ, խմբերգ և բանախօսութիւն. խօսեցան Պ. Պ. Զաքարեան, Ե. Տէր Մկրտիչեան, Օրք. Տէր Պօղոսեան և Պ. Կ. Հասսէօեան: Սա վերջինը յորդորեց ներկաները հաւատարիմ մնալու Զանիցի սկզբունքի առաջնորդելով երիտասարդութիւնը Քրիստոսի:

Ամէնէն վերջը խօսեցաւ հանդէսին նախագահը, Պատ. Յ. Արզաբեան, որուն օրհնութեան աղօթքովը վերջացաւ հանդէսը:

Ռմսոյս 26ին, Կիրակի առտուան ժամը ինն ու կէսին Ա. Հայ Աւետ. եկե-

ղեցւոյն մէջ խօսեցան Վեր. Գրոզ Անգլիերէն, Վեր. Հատիտեան թրքերէն և հովիւը հայերէն լեզուով: Վերջինը չըջանաւարտներուն և չըջանաւարտուհիններուն թաղեալ գեղեցիկ խրատական մը խօսեցաւ, Թրոնք գրաւած էին բեմին առջևի նստարանները:

Հասոյթներու նուագումին պատճառաւ Ա. և Էշրէֆիէյի Հայ Աւետ. եկեղեցիները այս տարի կարեւոր բացեր պիտի ունենան: Անգործութեան և համառարած տնտեսական տագնապի այս օրերուն այս բացը տեղական միջոցներով գոցել բաւական դժուար պիտի ըլլայ: Այս պատճառաւ Հայ Աւետարանական Ա. եկեղեցին ամսոյս 26ին 17 տարեկանէն վեր եղբայրներու հետ խորհրդակցական ժողով մ'ունեցաւ՝ պիւտճէն հաւասարակշռելու համար. գործնական գեղեցիկ քայլեր առնուեցան. բացը գոցելու համար եղբայրներու ի յայտ բերած զոհողութեան օգին իսկապէս քաջալերական էր: Վեր. Կէօքէօղեանի զոհողութիւնն ու վեհանձնութիւնը մասնաւոր գնահատանքի արժանի է:

ԿԱՅԾ

ՆՈՐ ՀԱՃԸՆԻ Մասին Տիար Մ. Գրգռեալարեան Պէյրութէն կը գրէ հետեւեալը. —

Հարիւրէ աւելի չէնքիր, բոլորն ալ սիմէնթէ, լրացած են: Ասանցմէ մօտ 30ը երկյարկանի լաւ չէնքիր են: Նօր Հաճընի շինութիւնը մեծ թափով կը յառաջանայ: Ամէնէն վերջը մնացողները ամէնէն աւելի միջոցներէ զուրկ եղողները պիտի ըլլան: Եթէ Ազգերու Դաշնակցութեան ներկայացուցիչը կարենա՞ր աւելի շատերուն օգնել գործը աւելի արագ կ'ընթանար: Բայց հիմա միսը հազիւ 5-6 ընտանիքներու կը օգնէ: Այս ամսուայն սկիզբը Մ. Պիւրնիէ 6 անհատներու տուտաւ երկաթեղէն և սիմէնթ:

Տիար Յարութիւն Փիլիպպոսեանի շինել տուած 16 երկյարկ բնակարանները աւարտած են, ուր մի քանի օր ետքը պիտի հաստատուին 28-29 աղքատ այրիներ և կորոտ ընտանիքներ: Այս գործին մէջ գնահատելի ծառայութիւն ունեցած է նախկին Հաճընի միսիոնար Մր. Իպի, որ փոխանորդն է Տիար Փիլիպպոսեանի:

ԱՅՍ ՏԱՐԻ Հալէպի Բեթէլ Հայ Աւետ. եկեղեցւոյ զաւակներէն 14 անձեր չըջանաւարտ եղան:

Օրք. Սրբուհի Գամպուրեան, Ռեմիկա Մինակոսեան, Սիրուն Ահարոնեան, Ռօզա Սուլագեան, Հալէպի Ամերիկեան Աղջկանց Բարձրագոյն վարժարանի սինկըր կարգէն, իսկ Օր. Արաքսի Հայաստան և Բարուհի Սարգիսեան նոյն դպրոցին Սօփոմոր կարգէն չըջանաւարտ եղան: Պ. Պ. Սամուէլ Վարժապետեան, Յարութիւն Պալեօզեան, Սուրէն Պապիկեան, Հապիպ Բարսեղեան, Սամուէլ Մանուշակեան, Մանուէլ Անսըրլեան Հալէպի Պոյգ Հայ Սքուլի Սօփոմոր կարգէն, իսկ Յակոբ Դէօթէթլեան, նոյն դպրոցի Նախապատրաստական բաժնէն ընթացաւարտ եղաւ:

Ամսոյս 13ին, չըջանաւարտաց Երգահանդէսի Յանձնախումբը ի պատիւ անոնց փառաւոր երգահանդէս մը սարքեց, Պատ. Ա. Յ. Հատիտեանի նախագահութեամբ նոյն եկեղեցիին սրահին մէջ: Պր. Ս. Մանուշակեան ճառ մը կարդաց արուն նիւթն էր Անցեալը, Ներկան և Ապագան: Նոյնպէս ուղերձ մը կարդացուեցաւ Օր. Ռ. Մինակոսեանի կողմէ, նիւթ ունենալով շերտաւորութիւնը եկեղեցիէն Ներսիս Օրուան բանախօսն էր Վեր. Ս. Աղպապեան, որ իր կեանքի փորձառութիւնէն օրինակներ բերելով տեղաւորեց Հայ ուսանողին արտին մէջ: Յիշեալը

քաջալերեց հայ դպրոցը, աշակերտը և ծնողքը, գնահատանքով յիշեց թէ ինչպէ՞ս անոնք ինքզինքնին ուսման նըստիւ անօթի ծաբաւ դպրոց կը յաճախեն։ Յետոյ իր խօսքը ծնողներուն ուղղելով ըսաւ թէ հայրեր և մայրեր արգիլելու չեն իրենց զաւակները խաղէ, խաղը անոնց մտային և ֆիզիզական կարողութիւնը կը զօրացնէ։

Հանդէսը յաջող անցաւ։ Տիկ. Լ. Քէթնէճեան երգեհոնի վրայ ջութակահար երիտասարդներու ընկերակցութեամբ գեղեցիկ կտորներ նուագեց։ Երգչախումբի և զայն կազմակերպող յանձնախումբին ջանքերը խիստ գնահատելի էին։ Հանդէսը վերջ տուաւ Վեր. Կ. Յ. Յարութիւնեանի աղօթքով։

(Թղթակից)

ՀԱԼԷՊԻ Նահատակաց Հայ. Ժող. եկեղեցին ի պատիւ իւր այս տարուայ շրջանաւարտ զաւակաց, ամսոյս 14 ին երեկոյթ մը ստորեց Նիզիպեան թանգարանի բակը։ Շրջանաւարտները եղանակով մը կարգաւ եկան և իրենց յատուկ տեղերը գրաւեցին։ Պատ. Յ. Չաքմազճեան, որ յայտագիրը կը վարէր, աղօթքով և յարմար բառերով հանդէսը բացաւ և ապա 12 շրջանաւարտներու անունները կարդաց, զանոնք ներկայացնելու հասարակութեան։ Առաջ են.— Պրն. Սարգիս Սէմէրճեան, Օրք. Մարի Եուսուֆ, Լիտիա Այնիլեան, Տիգրանուհի Եագուպեան, Ազնիւ Լիպարեան, Արուսեակ Խաչատուրեան, Վիգորիա Այաճաճեան, և Էֆրոնիա Արոշեան Ուսումնասիրաց Վարժարանէն, Օր. Լիտիա Աքքէլեան Հալէպի Ամբիկեան Ազնկանց Բարձրագոյն Վարժարանի Սափումը կարգէն, իսկ Պ. Պ. Սարգիս Պալապանեան, Սարգիս Գոչեան և Մարտիրոս Պարսիկեան Հալէպի Պոյզ Հայ Սքուլէն շրջանաւարտ եղան։

Յայտագրին մաս կը կազմէին ար-

տանանթիւններ, նուագ և մեներգ։ Պրն. Անտոնեան իր սրինգով և Օրք. Մարի Եուսուֆ, Վիգորիա Այաճաճեան, իրենց երգիծական արտասանութիւններով մասնաւոր փայլ մը տուին սոյն հանդէսին։ Իսկ Պրն. Յ. Քէճիւրեան և Օր. Ա. Խաչատուրեան, ալ աւելի հաճելի դարձուցին զայն իրենց անուշ և հաճելի ձայնով։ Օր. Էֆրոնիա Այնիլեան երգեհոնի վրայ կտորներ նուագեց։

Պատ. Տիգրան Խլորեան, Հայ ուսանողութեան հագուոյն խօսող ռադիո-ձով մը յոյսերով ազգայնաց զանոնք և թելագրեց աներկիւղ կեանքի ասպարէզ նետուիլ, անոր խոչնդոտներէն չյուսահատիլ, և իր կոչումին գիտակցելով և անոր հաւատարիմ մնալով զօրաւոր կամքով ողջունել մեր ապագայ Ոսկեգարը։

Յետոյ Պատ. Յ. Չաքմազճեան ըրաւ փակման խօսքը շեշտելով դպրոցին զանազան ծառայութիւնները՝ և ներդաշնակ զարգացումը հոգեւոր կրթութեան մէջ։ Եւ յայտնեց թէ դպրոցը վայր մըն է իմացական և հոգեւոր զարգացման։ Ան կը մեծցնէ մեզ փորձառութեամբ, մեծքալ կը նշանակէ ունակութիւններ կազմել, մարդ ըսածդ ունակութեանց փունջ մըն է։ Գիտութիւնը առանց հոգեկան յատկութեանց միակողմանի կ'ըլլայ, և շատ փլաստաբեր է։

Յետոյ եղաւ զարգացողի բաշխում, որ իբր նուէր՝ Նահատակաց եկեղեցւոյ «Ջանից»ի կողմէ տրուեցաւ իւրաքանչիւր շրջանաւարտի։

Խմորեղէն և օշարակ հրամայեալէ վերջ՝ հանգիստականները շրջանաւարտները շնորհաւորելով, և հանդէսի յաջողութեան, և զայն կազմակերպող յանձնախումբին խիստ գոհունակութիւն յայտնելով, Վեր. Կ. Յ. Յարութիւնեանի օրհնութեան աղօթքով ցըրուեցան։ Ներկայ էին Պատ. Ա. Հա-

տիտեան, Վեր. Ս. Ս. Մանուկեան և Բեթել եկեղեցիի շրջանաւարտները:

ԹՂԹԱԿԻՑ

Կ. Ա. ԹՈՓԱԼԵԱՆ. Համամայի Ամերիկեան սանթրոփումի հիւանդներէն մեզի կը գրէ. —

Դանի օրերը տաքցան հիւանդանոցը սկսաւ լեցուիլ ծայրէ ի ծայր, նոյնիսկ վրանի տակ հիւանդներ կան. նոյն ատեն ապաքինողներ ալ մէկիկ մէկիկ կը ձգեն հիւանդանոցը, այս ամսուայ վերջ կան խումբ մը օր ապաքինած ըլլալով կը մեկնին:

Անցեալներ ծերունազարդ Վեհափառ Սահակ կաթողիկոս այցելեց մեզ և հոգեւոր մխիթարութիւններուն միացուց նաև քսան (20) Ս. օսկիի նուէր մըն ալ աղքատ հիւանդներու փոքրիկ ծախսերուն համար, անշուշտ շնորհակալ ենք:

Ամառուան վազանցը Համառնա անցնող համալսարանի աշակերտներ յաճախ կ'այցելեն մեզ իրենց նուագներով և հաճոյալի ժամեր վայելել կ'ուտան մեզի: Մանաւանդ գլխաւոր հիւանդապահ Օր. Դեզանուշ իր քաղցր ու թըրթռուն ձայնով անուշ եղանակներ կ'երգէ յաճախ՝ մոռցնել տալով մեր ցաւերը, իր այնքան անուշ ձայնով կը զիւթէ և կը փոխադրէ մեզ ուրիշ երանութեան աշխարհներ ուր ցաւ ու վիշտ գոյութիւն չունին: Հիւանդանոցին Սախակն է ան իր գողտրիկ ու մեղանուշ ձայնով ամէնուն կողմէ սիրուած:

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԸ

Այս վերջին միջանի շաբաթներս սուգի ու տխրութեան օրեր եղան Զահլէի Բողոքական և Լուսաւորչական համայնքներուն՝ Վեր. Թակոբ Շնորհաբանի բաժանման առթիւ: Նոյն իսկ տեղացի արաբ երեսելիները, և կղերական դասակարգը մեծապէս ազդուեցան և ցաւ զգացին անոր բաժանումովը:

Զահլէի Բողոքական Համայնքի

պատկանող կարգ մը անձնուէր և ժըրալան երիտասարդներ, երիտասարդուհիներ և անհատներ երեկոյթ մը տարքեցին:

Տէր և Տիկին Յովակիմեան տիրով և յօժարութեամբ իրենց բնակարանին ընդարձակ դահլիճը կը տրամադրեն սոյն երեկոյթին: Հոն կը գտնուէր մօտ 200 անձերէ բաղկացած բազմութիւն մը: Օրուան նախազանգուհին էր Օր. Արմենուհի Կէօնճեան—Պէյրութի Աղջկանց Ամերիկեան Վարժարանի բարձր. կարգերու աշակերտուհիներէն: Եղան արտասանութիւններ, Օր. Զապէլ Տատուրեանի և Պրն. Ազատ Նոխուտեանի կողմէ: Պրն. Մելքոն Նոխուտեան և Պրն. Սարգիս Տէր Սարգիսեան գողտրիկ և հակիրճ աւղերձներ կարդացին, ուղղուած Վեր. Թ. Շնորհաբանի, եղան նաև օրուան յատուկ բանախօսութիւններ, Վեր. Հաճարի և Պրն. Խաչիկեանի կողմէն: Օր. Արչակունի Կէօնճեան իր սուղ և թանկագին ժամերը զոհելով՝ կարգ մը ընտիր շարականներ և հոգեւոր քառածոյն երգեր պատրաստելով՝ ներկաներուն հրամցուց: Երեկոյթը փակուեցաւ հոգեւոր հովիւին օրհնութեամբը:

Վեր. Թակոբ Շնորհաբան իր հօտը կսկիծի մատնելով՝ Օգոստոս 1ին մեկնեցաւ Քէսապ, հոն շարունակելու իր հովուական ծառայութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԱԻԵՏ. ԲԵՄԵՐՈՒ ՎՐԱՅ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԶԱՀԼԷԻ ԱԼԵՍ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿՈՎՈՒՆԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՊԱՏ. ՅՈՎԿ. ԱՐՉԱՐԵԱՆ:

ԲԷՍԱՊ ԿԱՅԱԾ Է ՎԵՐ. ԹԱԿՈՐ ՇՆՈՐՀՈՐԵԱՆ ԵՆԴՈՒՆ ԿՈՎՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԸՍՏԱՆՃՆԵԼՈՒ:

ՏԱՄԱՍԿԱՆՍԻ ԱԼԵՍ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿՈՎՈՒՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԸ ՎԻՄԻ ՍՏԱՆՃՆԷ ՎԵՐ. Ե. ՔԱՍՏԱՆԻ, ՈՐ ՔԷՔԱՊԷՆ ՔԱՂԱՔՈՒՆ:

կած է, և մօտ օրէն պիտի երթայ իր նոր եկեղեցիին հովուութիւնը ստանձնելու:

ՀԱԼԷՊ ԲԵԹԷԼ եկեղեցիին հովիւը Վեր. Կ. Բէթէնճեան և օգնականը Պատ. Ա. Հատիտեան հրաժարած ըլլալով անոնց տեղ հրաւիրուած է Տամակօսի հովիւը Վեր. Ներսէս Սարեան, օր ընդունած է իրեն տրուած հրաւերը:

ԱԹԷՆՔԻ Հայ Աւետարանական եկեղեցիներու նախաձեռնութեամբ հրաժեշտի ցերեկոյթ մը սարքուեցաւ Յունիս չորսին Բօքրիւի Հայ Աւետարանական եկեղեցւոյ սրահին մէջ ի պատիւ Միսս Ն. Բայսի և Սքուլ ալ Րիլիճընի: Սոյն հաւաքոյթին ներկայ էին Ամերիկեան, Անգլիական և Դանիական աւագեղութեանց ներկայացուցիչները, Սքուլ ալ Րիլիճընի ամբողջ սւսուցչական և ուսանողական կազմերը և Հայ Աւետարանական եկեղեցիներու, նախապրծարաններու և Կիրականօրեայ Դպրոցներու ներկայացուցիչները, մօտաւորապէս օւթսուն հօգի: Հաւաքոյթին նախագահը, Վեր. Կ. Սթամպօլուեան, բացման խօսքէն յետոյ բնի հրաւիրեց սոյն տողերը գրողը, որ բարեգալուստ մաղթելով թղթունեց ներկաները յանուն Աթէնքի Հայ Աւետարանական համայնքներուն: Յետոյ կարգաւ խօսեցան Վեր. Յ. Ծէճիկեան և Տոքթոր Ժ. Բ. Մարտին արոնք պատշաճ կիրպով գնահատական խօսքեր ըրին այն պատուական ծառայութեան մասին զօր Սքուլ ալ Րիլիճընը մատուցած է Աթէնքի և Միւս գաղութներու գաղթական հայերուն: Ի վերջոյ Միսս Ն. Բայս, Մր. Բօզ և Սքուլ ալ Րիլիճընի Փոխնախագահ, Մր. Գրիւսթըր, յաջորդաբար խօսելով շնորհակալութիւն յայտնեցին իրենց եղած յարգանքին և պատիւներուն համար: Յայտագրին մաս կը կազմէին նաեւ մի

քանի քառեակներ զոր երգիչ խումբը երգելով դիւրացուց սիրաջերմ մթնոլորտի մը ստեղծումը: Ներկաները պաղպաղակով հիւրասիրութիւն յետոյ սրահէն մեկնեցան գոհ տպաւորութեան տակ:

Յունիս 20 ին տեղի ունեցաւ Բոքրիւի Հայ Աւետարանական նախապրծարանի մարդահանդէսը վարժարանին բակին մէջ՝ հետաքրքիր հոծ բազմութեան մը ներկայութեան: Աշակերտներուն կողմէ եղան մարդահանդէսին ընթացքին պարկարշաւ, դրօշարշաւ, սակառախաղեր, վազքի զանազան մրցումներ, թռչնազնդակի խաղեր որոնց ուշադրութեամբ հետեւեցան հանդիսականները: Հանդէսէն յետոյ լաւագոյն մրցողներուն մետալներ բաշխեց Պարոն Տիրան Ալեքսանեան: Իսկ 22 ին տեղի ունեցաւ նոյն վարժարանին ամսական հանդէսը եկեղեցւոյ ընդարձակ սրահին մէջ ի ներկայութեան հանդիսականներու խումբերով բազմութեան: Վարժարանին սաները լաւագոյն կերպով մարզուած ըլլալով յաջողապէս խաղարկեցին արամիներ Հայերէն և Յունարէն լեզուներով: Պարոն Յ. Պայըրեանի ղեկավարութեամբ երգեցին երգեր, և կարգ մը սաներ ու սանուհիներ արտասանութիւններ ըրին: Այս տողերը տարագրողը կարճ ուղերձ մը ըրաւ շրջանաւարտ 14 աշակերտներուն՝ նմանցնելով զանոնք լեռներէն հանուած բերեղներու և գոհարներու: Վերջը Պատ. Մ. Բէճիկեան իւրաքանչիւր շրջանաւարտին կարագրի ցայտուն գիծերը յիշելով վկայականներ բաշխեց: Մեզի համար սուգի օր մը եղաւ Յունիս 15 ը երբ տեղի ունեցաւ դառնադէմ մահը փոքրիկն Հէլլէնի: Փրոֆ. Լ. Լեւոնեանի զեղադէմ, մտացի և քաղճարարայ դասեր: Բազմաթիւ բարեկամներ և Աթէնքի Հայ Աւետ. եկեղեցիները փութացած էին ծաղկեպսակներ զե-

տեղի վազադին վրայ ի նշան իրենց սիրոյն և համակրութեան: Փրօֆ. Լեւոնեանի բնակարանին մէջ յաղարկաւորութեան տխուր պաշտամունքը կատարուելէն յետոյ մարմինը ամփոփուեցաւ Աթէնքի գերեզմանատան Անգլիական բաժինին մէջ: Մեր խորին ցաւակցութիւնները մեր յարգելի բարեկամին և մեծ հայուն Փրօֆ. Լեւոնեանին և իր բոլոր սգակիր պարագաներուն:

ԳՐԻԿՈՐ ՏԷՄԻՐՃԻԵԱՆ

ՎԵՐ. Հ. ԽԱՆԴԱՄՈՒՐԻ զուստը Օր. Ալիս, դաշնակի շատ յաջող գրէսիթալը մը տուած է Գահիրէ, 300 հոգիէ բաղկացեալ երաժշտասէր բազմութեան մը ներկայութեան, կը գրէ Գահիրէի «Արեւը»: Օրիորդը Վեց տարիներէ միայն աշակերտած է Բրոֆ. Ս. Խաչատուրեանի, և իր ցոյց տուած երաժշտական տաղանդովը յայտնութիւն մ'եղած է: Մեծ վարպետներու դժուար կտորները նուազած է առանց իր առջևը գիրք ունենալու: Նուազահանգէսի կէսին երեք ծաղկեփունջեր նուիրած են երիտաւորդ դաշնակահարուհիին:

ԷՋՄԻԱՄՆԻ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նախագահ և Կաթողիկոսական Տեղակալ Մուսաբեկեան Արքեպիսկոպոսին զրկած մէկ հեռագրին համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պիտի ընտրուի յառաջիկայ աշնան Նոյ. 10ին: Հետեւաբար աշխարհի ամէն կողմերէն կղերական և աշխարհական պատգամաւորներ հոն կը հրաւիրուին:

Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն կը հրաւիրուին Տ. Տ. Սահակ և Բարգէն հայրապետները, 4 աշխարհական և հինգ կղերական: Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն կրկին 4 աշխարհական և 5 կղերական: Երուսաղէմի պատրիարքութենէն 6 կղերական և մէկ աշխար-

հական: Եւրոպայի և Ամերիկայի թեմերը ընդամենը պիտի ունենան 32 ներկայացուցիչներ: Խ. Միութիւնը պիտի ունենայ 52 ներկայացուցիչներ: Այնպէս որ ընդհանուր պատգամաւորներու թիւը թէ արտասահման և թէ Խ. Միութենէն պիտի ըլլայ 130, որուն 50ը եկեղեցական և 80ը աշխարհական են: Բարգէն վեհափառը, կը գրէ «Ազգակ» կը պատրաստուի էջմիածին մեկնիլ հակեղեց. ընդհանուր ժողովին մասնակցելու համար:

ՍԵԼԱՆԻԿԷՆ Մեր թղթակիցը, Պատ. Կ. Ֆարաճեան, կը գրէ.— Յունաստանէն Դ. Կարաւանն ալ Յուլիս 1ին մեկնեցաւ դէպի Հայաստան 1500 հոգի տանելով առանց հաշուելու փոքրիկները: Այս անգամ գոյքերու փոխադրութիւնը և զաղթականներու տեղաւորումը շոգեհաւին մէջ եղաւ անթերի կարգապաւ. հոսթեամբ արովհեառ պետական մօքսային և ծովային մասնաւոր պաշտօնեաներ աշաւորջ կը հսկէին: Երկրէն դուրս ոսկեղրամի արտածումը արգիւտուած ըլլալով զաղթականները մանրակրկիտ քննութեան ենթարկուեցան: Ոմանց քով ոսկեղրամ գտնուելով գըրաւուեցաւ, իբր փոխարժէք յունական թղթադրամ վճարուեցաւ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ կառավարութիւնը պաշտօնական արտօնութիւն տուած է Հ. Բ. Ը. Միութեան իր երկրին մէջ մասնաճիւղեր կազմակերպելու համար: Մովսէս Խան Խաչատուրեան եօթը համակիրներու հետ կազմած է Թեհրանի մէջ առաջին մասնաճիւղը կը գրէ «Վերածնունդ»:

ՎԵՐՋԵՐՍ ԽԱՍԻՎԱՅԻ (Պուլկարիա) հայերուն տնտեսական թշուառութիւնը իր դադաթնակէտին հասած է: Թերթերը կը գրեն թէ ամբողջ շաբաթներ ժողովուրդը, մասնաւորաբար կիներ և երախաներ անգործ, անօթի և ծարաւ փողոցները կը պտըտին: Կանայնպի-

սիններ որոնք նոյնիսկ պատասպարան մը չունին և դիմած են տեղւոյն եռանդամ Թաղականութեան արպէսդի եկեղեցւոյ և դպրոցին դռները բացուին զիրենք ներս ընդունելու համար։ Սակայն գոհացուցիչ արդիւնք յառաջ եկած չէ, այնպէս որ հայ գործադուրկները մատնուած ահռելի թշուառութեան իրենց զաւակներուն հետ դաշտերը խոտ արածելու կ'երթան։

«ՍԻՈՆ»ի Յուլիսի թիւին մէջ կը կարդանք թէ Երուսաղէմի հայոց վանքին Միաբանութիւնը իր Ընդհանուր Ժողովին մէջ միաձայնութեամբ վաւերացուցած է յառաջիկայ տարուան ելեւմտացոյցը, պատրաստուած Վսեմ. Ոսկան Պէյ Մարտիկեանի կողմէ, որուն շնորհիւ «պարտքի վիշապը զգետնուած է և պիտոճէն հաւասարակշռուած»։ Յայտնուած խնդրանքներուն վրայ Ոսկան Պէյ աստե՛ն մ'ալ պիտի մնայ պարտքին ջնջումը հնարաւոր ընող միջոցները քննելու Միաբանութեան հետ համախորհուրդ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ նշանաւոր մասնագէտ ուսուցիչներէն Տիար Պապովեանը տեսակ մը գործիք հնարած է որ արեւի ճառագայթներուն տաքութիւնը կը կեղրոնացնէ և ապա կը ծառայէ ջուր եռացնելու և կերակուրներ եփելու համար։ Այս գործիքը կրնայ մինչև 1400 աստիճան տաքութիւն արտադրել, որով անագը շուտով կը հալի։ Այս գործիքը կրնայ թէ՛ տաւներու և թէ՛ ճաշարաններու մէջ գործածուիլ։

Ամառուան ամպոտ օրերուն ալ կըրնայ այս գործիքը գործածուիլ, եակայն ձմեռուան երկու երեք ամիսներուն անգործ կը մնայ։

ԹԵՐԹԵՐԸ կը գուժեն մահը յայտնի գրագէտ Յովհաննէս Ասպետի (Օննիկ Զիֆթէ-Սարաֆ) կարճատեւ հիւանդութենէ մը ետք։ Նախ առևտրական ասպարէզը ընտրած և յետոյ նաւիր-

ուած է գրականութեան։ Զինադարեն ետք «Հայ Միտք» շաբաթաթերթին խմբագիրը եղած է։ Զօր տարիէ ի վեր եղած է Ժընէվի «Յուայէ Արմենիէն» որբանոցին տնօրէնը։

ՎԵՐՋԵՐՍ Թրանսայի մէջ հրատարակուած է զիրք մը «Տագնապէն դէպի Բարօրութիւն» անունով հեղինակութեամբ Տիար Պետրոս Հալաճեանի ֆըրանսական և ուրիշ օտար թերթեր գովառանքով յիշած են այս գերքը, զայն Պէտրոս Հալաճեանի «Լոմբարդ» անունելով։ Կը գրուի թէ այս գիրքը խորաթափանց ուսումնասիրութիւն և զննութիւն մըն է անտեսական համատարած և սոսկալի տագնապին՝ արմատական և վերջնական բուժման միջոց մը ցոյցաւորու համար անոր։ Մէկ խօսքով այս գիրքը ներկայ անախընթաց տագնապին բժշկական դեղը կը համարուի, և մեծ քաղաքագէտներուն ուշադրութեան և գնահատանքին արժանացած է։ Փօլիթիս, Ազգերու Դաշնակցութեան վարիչ չըջնակներուն մէջ յարգուած դէմք մը, կը փափաքի որ այս գիրքը Ազգերու Դաշնակցութեան կողմէ նկատողութեան առնուի։

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՅԵՆ

Ամիսներ առաջ Տիւրիս մեռած Տ. Դիթիգոր Գարակէօզեան կտակած է շուրջ 1000 ոսկի։

Տ. Յովհաննէս Ներկարարեան, որ ամիս մը առաջ Պուքրէշ մեռած է, Միութեանս կտակած է Պուլկարիոյ մէջ աւելցած իր գրամն եւ գոյքերը եւ անշարժ կալուածները ամբողջովին շուրջ 4 միլիոն լէվա արժողութեամբ, զայնմառ որ եկամուտներէն տուրքերը եւ կանխորոշ վճարումները կտտարուին, եւ յետոյ ինչ որ աւելնայ տարուէ տարի յատկացուի Պընթէնի Հայկական Որբանոցին զոր կը վարէ Մ.

Քրաֆթ Պոնար, եւ երբ այլեւս գոյութիւն չունենայ օտյն Որբանոցը, Միութիւնը ինք գործածէ իր նպատակներուն :

Անվերսաբնակ Տիկին Թագուհի Ճանիկեան Միութեանս կը նուիրէ շուրջ 1 միլիոն 200000 Պելժիական Ֆրանքի հիմնադրամ մը, ուրկէ կարգ մը վճարումներ ընելէ վերջ, մնացեալին եկամուտը մեր Միութիւնը պիտի յատկացնէ հայ չքաւոր թոքախտաւորներու անկողնի

հիմնարկութեան կամ օանաթօրիոմներու մէջ դարձանումին :

Նիկոսիա մեռած Տիկին Աննա Նազարեանի կտակէն, ըստ համաձայնութեան, Միութեանս յանձնուած է 100 Անգ. ոսկի, յօգուտ Երբեքու, իր եւ իր հանգուցեալ զաւկին Տ. Միհրան Նազարեանի յիշատակին :

Բարիկ, 1 Օգոստոս 1932

ԴԻԻԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ



PRESCRIBE

IODO-MALT

— QUINO-MALT

IDEAL TONICS

FOR ALL



Իօսօ+Մալթ=Իօսօմալթ.

Իօսօնայրի գործածութիւնը զմայլելի արդիւնք կ'ուտայ՝ թէ՛ իբրեւ կանխարգելիչ միջոց մը եւ թէ՛ իբրեւ բուժիչ, անհամար հիւանդութեանց մէջ, որոնց սկզբնաւորութիւնը հազիւ թէ հասկնալի դարձած է :

Իօսօնայրը սահմանուած է բուժելու ամէն տեսակ մարսողական անկանոնութիւն, որ բազմազան ձեւերով երեւան կուգայ, յանգելով երբեմն հիւծախտի այտուցաւոր թոքախտի, դալկահարութեան, պնդերակութեան եւ երբ անոնք զանազան բարդութեանց, մանաւանդ՝ հետեւանքներն են թերի օննդառութեան :

Իօսօնայրը եւ Քինօնայրը ախորժակամ ըլլալով, դիւրաւ կրնան առնել զանոնք մանուկներ, տարեցներ, տիկիներ, եւ նոյն իսկ ամէնէն նրւաճակ անձեր :

Զափահասներու համար.— Օրական երեք անգամ, մէյմէկ օպուրի դգալ : Մանուկներու համար.— Այս դեղաչափին կէսը :

Իօսօնայրը եւ Քինօնայրը կը ծախուին բոլոր յայտնի դեղաբաններու մէջ :

Քինօ+Մալթ=Քինօմալթ.

Քինօնայրը՝ անհրաժեշտ դարձան մըն է, հետզհետէ յառաջացող նիհարութեան, օր կրնայ հետեւանքն ըլլալ օրեւէ ծայրայեղութեան մը, կամ չարաչար աշխատանքի :

Քինօնայրը անփոխարինելի է մանաւանդ՝ ուժաթափութեան եւ հիւծումի պարագաներուն, ինչպէս նաեւ հիւանդութենէ մը վերջ, ապաքինման շրջանին համար :

صاحب الاختار والمدير المستول القس ق. هاروتونيان